№ 249 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 10 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1909
ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 10 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 249

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով.
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 228.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1910 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(38-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և միևնոյն ժամանակ 40 կ. նամականիշ։

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով առեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։ Հին բաժանորդներից խնդրվում է կցցնել փոխադր. բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Այսօր, երեքշաբթի, նոյեմբերի 10-ին
տեղի կունենայ
Ընտանեկան երեկոյթ
ՀԱՄԵՐԳ երկու բաժանմունքով մասնակցութեամբ Ե. Մ. Միխայլովայի, Իշխանուհի Անդրօնիկօվայի, Զարէի և Դուեթեանի։
Մանրամասնութիւնները ծրագիրներում։
Երեկոյթին կը նուագեն լարանուագ և բամբշտախումբը և սազանդարներ։
Համերգից յետոյ եւրօպական և ասիական
ՊԱՐԵՐ
Պարողներին խնդրվում է լինել սև հագուստով կամ ազգային զգեստով։
Համերգի տեղերի գները. I կարգ—75 կ., II, III և IV կ.—50-ական կօպ., մնացածները—30-ական կօպ.։
Տոմսակները վաճառվում են Ժողովարանի շվէյցարի մօտ։
Համերգի սկիզբը երեկոյեան ժամը 9-ին։
1214. 1—1

ԿՐԹԱԿԱՆ ՍՈՎ ԵՒ ԾԱՐԱՒ

Մուշի առաջնորդ Ներսէս եպիսկոպոս Խարախանեան Էջմիածնից եկել էր Թիֆլիս և ուղևորվեց դէպի Բագու։ Նա տեսակցեց այն մշեցիների ներկայացուցիչների հետ, որոնք գտնվում են մեր քաղաքում, և յորդորեց նրանց լուրջ կերպով մտածելու և հոգատար լինելու Մուշի շրջանի դպրոցների պահպանութեան մասին։

Մշեցի պանդուխտները, որոնք եկել են մեր երկիրը աշխատանքի աղբիւրներ գտնելու և փող վաստակելու իրանց ընտանիքների համար, մեծ պատկառանքով լսեցին իրանց առաջնորդի հրաւէրը և խոստացան անել այն ամենը, ինչ որ հնարաւոր է իրանց կողմից, բայց կարող չեղան մեծ նուիրատուութիւնների յոյսեր տալ, որովհետև իրանց ունեցածը քիչ է և կազմվում է կոպէկներից, որ նրանք վաստակում են չարքաշ աշխատանքներով։

Մուշի առաջնորդը դեռ անցեալ տարվանից իր գլխաւոր հոգածութեան առարկան է դարձրել Մուշի դպրոցների զարգացման և պահպանութեան գործը։ Նա դիտաւորութիւն ունի դպրոցական ցանցով պատել Մուշի դաշտավայրը և միևնոյն ժամանակ հիմք դնել մի կենտրոնական գիւղատնտեսական կրթարանի, որը ունենար փորձնական ագարակ և ցուցադրաշտէր գիւղատնտեսական արհեստը կատարելագործելու նպատակով։

Երկու տարի շարունակ Ն. Խարախանեանը բաղխում է դռները, օժանդակութիւն և աջակցութիւն խնդրելով Մուշի ժողովրդի կրթական հաստատութիւնների համար։ Նա բոլորովին իրաւամբ կարծում է, որ տասնեակ տարիներով Անդրկովկասի զանազան տեղերում բանուորութիւն անող «ղարիբ մշեցու» կրթական կարիքը չը պէտք է արհամարհանքի և մոռացութեան մատնվի, երբ բացվել է արշալոյս նոր գործունէութեան համար տանջանքի և մութմուքի երկրում։

Թիւրքահայաստանը և նրանց թւում Մուշի դաշտավայրը վերջին տասնեակ տարիներում զրկվել էին հանրային հասարակական կուլտուրական գործունէութեան հնարաւորութիւնից, իսկ տնտեսական քայքայումը հասած էր իր վերջին ծայրերին։

Այդպիսի թշուառ ժառանգութեամբ թիւրքահայ ժողովուրդը մտաւ սահմանադրական կեանքի մէջ, և, անշուշտ, նա չափազանց թոյլ և կազմալուծված մի մարմին է, որպէսզի կարող լինէր հէնց առաջին օրերից սկսած օգտվել սահմանադրութեան բարիքներից մեծագոյն չափով։

Եւ այժմ մենք տեսնում ենք մնանկ մի երկիր, որ միջոցներ չունի շուտով վերակազմուրվելու և իրականութեան մէջ ուժեղ դիրք բռնելու։

Նա կարօտ է օգնութեան և աջակցութեան։

Ամեն մի յապաղում, ամեն մի յետաձգված տարի աւելացնում է թշուառութեան ծաւալը և նոր դժուարութիւններ առաջացնում բեղմնաւոր կուլտուրական գործունէութեան համար։

Իսկ երբ օր առաջ հնարաւորութիւն կը տրվի ժողովրդին կրթվելու, արհեստի կատարելագործութիւնների հետ ծանօթանալու և իր գործառնութիւնների մէջ դիւրութիւններ գտնելու, այն ժամանակ կարելի է յուսալ, որ բուն երկրի մէջ կը ստեղծվեն արդիւնարար աշխատանքի պայմաններ և ժողովուրդը ձեռք կը բերէ թէ տնտեսական ապահովութիւն և թէ հասարակական-կուլտուրական ոյժ իր բնակավայրում։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 7 նոյեմբերի

Պետերբուրգի համալսարանում տեսչի արգելքի հակառակ տեղի ունեցաւ համաուսանողական ժողով։ Տեսչի յորդորանքները՝ ցրվելու մասին՝ ապարդիւն անցան։ Դրանից յետոյ համալսարան կանչվեցին ոստիկաններ։ Ուսանողները, տեսնելով ոստիկանութեան գալուստը, ցրվեցին։

Ժողովը գումարվել էր պրեզիդիումի գործի առիթով, որի անդամներին իբրև պատիժ դարձրել են ազատ ունկնդիրներ՝ Ֆերրէրի մահվան պատժի դէմ բողոքելու նպատակով խորհրդակցութիւն կայացնելուն համար։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 8 նոյեմբերի

Քաղաքային դումայի դահլիճում Գրական Ֆոնդի 50-ամեակի առիթով տեղի ունեցաւ հանդիսաւոր նիստ։ Առաջինը ճառ արտասանեց կարիքաւոր գրականագէտներին և ուսումնականներին օգնող ընկերութեան կօմիտէտի նախագահ Կարէևը։ Ապա արտասանվեցին մի շարք ճառեր, նըւիրված Ֆոնդի 50-ամեակին և հանգուցեալ գործիչների յիշատակին։ Յետոյ կարդացվեցին երեսունից աւելի շնորհաւորանքներ։ Ֆոնդի կօմիտէտը ստացաւ բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ, ի միջի այլոց՝ Լօնդօնի անգլիական Գրական Ֆոնդից։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 8 նոյեմբերի

Զինուորական ծառայութեան խընդիրների մասնաժողովը խօսեց յօգուտ հեռաւոր զօրքի ծառայութիւնը աւելացնելուն և կրթական ու ընտանեկան դրութեան արտօնութիւնները կրճատելուն։ Արտօնութիւնները պահվելու են բարձրագոյն և միջնակարգ դպրոցների աւարտածների համար, նաև ընտանիքի միակ՝ աշխատանքի ընդունակ որդու համար։

Եալտայից հեռագրում են, որ պարսից նախկին շահ Մահմէդ-Ալին գնում է Ղրիմի գեղեցիկ անկիւններից մինը՝ Սօուք-Սու կուրօրտը։ («Б.»)

—

Պետերբուրգ.—Այստեղ հաստատվում է Ռուսաստանում ալկօհօլիզմի դէմ ակտիվ կռիւ մղող ընկերութիւն՝ գիտական հիմունքների վրա։ Հիմնադիրներն են Խոմեակովը, Տիմիրեազևը, Բուխլովը և այլն։

Օդեսսայում պարսից նախկին շահ Մահմէդ-Ալին այցելելով տեղական բանտը, նկատել է, որ ռուս. բանտերը պարսկական պալատներից աւելի գեղեցիկ են, և զարմանում է, որ բանտարկեալներին կերակրում է պետական գանձարանը. «Մեզ մօտ—ասել է շահը—կերակրում են ազգականները, իսկ ով չունի՝ ոչինչ չէ ուտում»։ («Б.»)

—

Պետերբուրգ, 8 նոյեմբերի

«Ֆինլանդական լրագրում» մանրամասնաբար տպված է այն քննութեան հետևանքը, որ կատարվեց ֆինլանդական գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ՝ իբր օգնական Զէյնի ղեկավարութեամբ՝ ուղղափառ հոգևոր անձանց վիրաւորելու առիթով։ Նրանցից 12-ը վկայեցին, որ նրանք յաճախակի ենթարկվում էին վիրաւորանքների։

Ծանօթանալով քննութեան հետ, Բէկմանը տեսաւ, որ ահագին մեծամասնութեամբ մեղաւորներ հանդիսանում են դպրոցական հասակի երեխաներ։ Բէկմանը հարկաւոր գտաւ խընդրել ֆինլանդական սենատին ձեռք առնել անյետաձգելի միջոցներ աշակերտների վրա հսկողութիւնը կրկնապատկելու համար։ (Հ. Գ.)

—

Պարիզ.—Բուրցևը շարունակում է մերկացնել Աննա Սերեբրեակօվայի պրօվօկատորական գործունէութիւնը։ Նա եղել է Կարմիր Խաչի և սօցիալ-դեմօկրատական կազմակերպութեան անդամ, ուր վայելել է անպայման վստահութիւն։ Նրա բնակարանում հանդիպում էին զանազան կուսակցութիւնների ներկայացուցիչներ, պահվում էին վտանգաւոր իրեր։ Սերեբրեակօվայի ամուսինը գրականագէտ-թարգմանիչ է, ծառայել է զէմստվօյում։ Սերեբրեակօվան պրօվօկացիայով զբաղվել է 1885 թվից։ Նրա ծառայութիւնները շատ թանգ էին գնահատվում պահնորդական բաժանմունքում, ուր նրան անուանում էին «մամաշա»։ Ոստիկանութեան դեպարտամենտի գործերում զեկուցում կայ, որ Սերեբրեակօվան պարգևներ է ստացել 5000-ական րուբլիներով։ Զեկուցման մէջ թւում են մէկ առ մէկ նրա մատուցած ծառայութիւնները։ Զեկուցագիրը կը հրատարակվի։ («Б.»)

—

Վինդաւա, 8 նոյեմբերի

Գիշերս անակնկալ բարձրացած փոթորիկը խորտակեց մի քանի ձկնորսական նաւակներ։ Շատ ձկնորսներ խեղդվեցին։ (Հ. Գ.)

—

Բեռլին.—Այստեղ մեծ հետաքրքրութեամբ հետևում են ֆինլանդական ճգնաժամին և յոյս յայտնում, որ Պետերբուրգում չեն դիմի նոր րեպրէսիաների, որպէսզի ճգնաժամը սուր կերպարանք չը ստանայ։ («Б.»)

—

Չէրրի (նահանգ Իլլինօյիս), 8 նոյեմբ.

Ս. Պօղոսի հանքերի հրդեհի ժամանակ 40 բանուորների կենդանի հանեցին։ Հանքերի մուտքի մօտ խռնվում են բազմաթիւ կանայք։ (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թեհրան, 8 նոյեմբերի

Մինիստրները, որ մէջլիսի բացման օրը ձևի համար հրաժարական էին տուել, շարունակում էին զբաղվել ընթացիկ գործերով։

Մէջլիսը վերջացրեց պատգամաւորների ընտրութիւնների ստուգութիւնը։

Գահական ճառի այն մասը, որ վերաբերում է ռուսաց զօրքերի Պարսկաստան գալուն, օտարազգի թղթակիցները սխալ կերպով են հաղորդել։ Այս մասը ասում է. «Մենք հաստատ յոյս ունենք, որ այն յուզմունքը և վիշտը, որ պատել է Պարսկաստանի ազգաբնակութեանը պարսկական հողի վրա օտարազգի զօրքի ներկայութեան պատճառով, ամենակարճ ժամանակում կը վերանան շնորհիւ բարեկամական բանակցութիւնների, որոնց արդէն ձեռք է զարկված, նաև շնորհիւ մեզ տրված կտրուկ խոստումների և այն լաւ հետևանքների, որ մենք այդ տեսակէտից արդէն փորձել ենք»։ (Հ. Գ.)

—

Թեհրան, 8 նոյեմբերի

Մէջլիսի նախագահ ընտրվեց Մուստէշար-ուդ-Դովլէն, փոխ-նախագահներ՝ Հաջի-Սէյիդ-Նասրուլլա և Մօմզօզ-ուդ-Դովլէ։ (Հ. Գ.)

—

Թաւրիզ, 7 նոյեմբերի

Շրջակայ գիւղերից ամենայն օր քաղաք են գալիս մեծ թւով փախստականներ։ Ղարադաղցիները և շահսէվանները կողոպտում են Թաւրիզից 20—30 վերստ հեռաւորութեան վրա ընկած գիւղերը։ Որովհետև Մուժամբար մեծ գիւղին վտանգ է սպառնում, գեներալ-նահանգապետն այնտեղ ուղարկեց 300 ձիաւորների։ (Հ. Գ.)

—

Ինչպէս հաղորդվում է ստոյգ աղբիւրից, վերջերս Թիւրքիայի ու Պարսկաստանի միջև կայացել է մասնակի մի համաձայնութիւն, որ վերաբերում է «համավէնդ» կոչված ցեղերի նկատմամբ ձեռնարկվելիք այն միջոցներին, որոնցով կարելի պիտի լինի զսպել այդ ցեղերի աւազակային գործողութիւնները, որոնցից գրեթէ հաւասարապէս նեղվում են դրացի երկու երկիրների սահմանակից ազգաբնակութիւնները։ Այդ աւազակ ցեղերը վերջերս թիւրք զօրքերից հետապնդվելով անցել էին սահմանը և պարսկական հողում ապաստանվել, այդպիսով բաւական ծանր դրութեան մէջ դնելով պարսից կառավարութեանը։

—

Կ. Պոլսի պարսից դեսպանը վերջերս դիմել է օսմ. կառավարութեանը՝ խնդրելով վերջինիս միջամտութիւնը Քիրմանշահի նահանգում ապստամբող «Ջաֆ» կոչված ցեղը պատժելու գործում։ Դեսպանն իր դիմումին պատասխան է ստացել, որ օսմ. կառավարութիւնը ոչ միայն Ջաֆ ցեղը պատժելու գործում իր աջակցութիւնն է ընծայելու, այլ և աշխատելու է վերջ տալ պարսկաթիւրք սահմանագլխի վրա յաճախակի կրկնվող անթոյլատրելի դէպքերին։

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պոլիս.—Ոգելից խմիչքներ Թիւրքիա ներմուծելու արգելքը ընդունվեց երկու պալատներից և հաստատվեց սուլթանից։ («Б.»)

—

Կ. Պոլիս.—Կրէտական հարցի առիթով բանակցութիւնների ծանրութեան կենտրոնը փոխադրվում է Պետերբուրգ։ Նախաձեռնութիւնը իր վրա է վերցրել Իզվօլսկին։ («Б.»)

—

Կ. Պոլիս.—Ներքին գործերի մինիստրութիւնը դադարեցրեց յունական մի քանի լրագիրներ, նաև արգելեց Թիւրքիայի սահմաններում ստանալ պարիզեան «Նէվ Եօլ» (Նոր Ուղի) լրագիրը այն պատճառով, որ այդ լրագիրները ագիտացիա են մղում գոյութիւն ունեցող րէժիմի դէմ։ («Б.»)

—

Մեր ընթերցողները երևի կը յիշեն սրանից մի քանի ժամանակ առաջ մեր հաղորդած այն տեղեկութիւնը, թէ օսմ. կառավարութիւնը մտադրել է Թիւրքիան երկաթուղու ցանցով պատել, գտնելով որ այդ բանն անհրաժեշտ է երկրի տնտեսական վերածնութեան համար։ Կառավարութեան այդ մտադրութիւնն առաջին անգամ արտայայտվեց նրանով, որ առևտրի և հանրային շինութիւնների նախորդ մինիստր Նորատունկեան ժամանակին մի ընդարձակ ու մանրամասն ծրագիր մշակեց, որից երևում էր, թէ օսմ. կառավարութիւնն իր երկրի ո՛ր կէտերը երկաթուղով և ո՛ր կէտերը խճուղով ցանկանում է միացնել։ Ներկայումս ֆրանս-ռուսական մի ընկերութիւն խնդրամատոյց է եղել թիւրք կառավարութեանը, որպէսզի իրան մենաշնորհ տրվի երկաթուղագիծ կառուցանելու Սամսոնից մինչև Սեբաստիա, որպիսի երկաթուղագծի կառուցումը նախատեսված է Նորատունկեանի ծրագրում։ Ընկերութիւնը օսմ. կառավարութիւնից որևէ երաշխաւորութիւն չէ պահանջում այդ երկաթուղու կառուցման առիթով։

Առհասարակ մատնանշվում է այն հանգամանքը, որ կանոնաւոր ճանապարհների բացակայութիւնից օգտվում են մեծ մասամբ վաշխառուները և սպէկուլյատորները, որոնք, Անատօլիայի մանաւանդ ներքին նահանգներում, առանց այն էլ աղքատ ազգաբնակութեանը ծծում են անխնայօրէն՝ վաճառելով ցորենը բնակչութեան վրա 6—10 անգամ աւելի թանգ, քան ինչ որ արժէ կայսրութեան ծովեզերեայ մասերում։

—

Զմիւռնիայի նահանգից դէպ Ամերիկա գաղթող թիւրքերի թիւը վերջերս հետզհետէ աւելանում է։

Այդ լուրը հաղորդող թիւրք թերթերը օսմ. կառավարութեան լուրջ ուշադրութիւնն են հրաւիրում գաղթականութեան առաջն առնելու կարիքի վրա, մատնանշելով որ այդ արտագաղթը նկատելի կերպով վնասում է յիշեալ շրջանի թէ առևտրին և թէ երկրագործութեանը։

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պոլիս, 28 հոկտեմբեր

Այս օրերս հրապարակի վրայ է ամբողջ Ադանայի ապահովագրական հարցը։ Քանիցս գրուեցաւ թէ եօթը-ութը ընկերութիւններ համաձայնած են հրդեհին վնասը հատուցանելու, իսկ մեծ ընկերութեան մը հայ լուսաւորչական ներկայացուցիչը կընդդիմանայ։ Այդ ներկայացուցիչ հայը, Սիմօն Ղայսէրլեան, իր երկարամեայ պաշտօնին մէջ, որքան լաւ ներկայացուցիչ, նոյնքան պարտաճանաչ լաւ հայ մը եղած է։ Հրապարակային ծանր ամբաստանութեան մը վրայ, հարկ համարեցի անձամբ տեսնել զինքը ու, իբրև թղթակից «Մշակի», լսել։

— Պարո՛ն տնօրէն, ծանր ամբաստանութիւններ կը լսուին ձեր անունին բոլորտիքը։

— Այո, դժբաղդաբար։

— Դուք կըրնա՞ք յանձն առնել, որ ապահովագրական ուրիշ ընկերութեանց ներկայացուցիչներ համաձայնին վճարել Ադանայի մէջ հրդեհի վնասները, և դուք, իբրև հայ ներկայացուցիչ, հակառակիք։

— Ես կը ցաւիմ, որ ամբաստանողները շատ հեռի են ճշմարտութենէ։ Պատիւ կը համարիմ ըսել, թէ երբ առաջին անգամ այդ հարցը մէջտեղ գրուեցաւ, ես ինքս էի, որ առանձնաբար խորհուրդ տուի կազմել գոնէ իրաւաբաններու խորհրդակցական մասնախումբ մը և պահանջքի գործը ձեռք առնել հաւաքական ուժով դատարանի առջև։

— Այդ կերպով հնարաւոր պիտի ըլլա՞ր յաջողութիւն ձեռք ձգելու համար։

— Եւ որովհետև պէտք էր բան մը ընել, ատ էր լաւագոյն միջոցը։ Ընկերութիւնները, պարտք մը հատուցանելու համար, կամ պարտաւորուած ըլլալու են իրենց տուած polices-ներուն պայմաններուն համեմատ, և կամ, երբ յաճախորդի մը պահանջները կը չէզոքանան ընկերութեան մը պարտամուրհակի պայմաններուն մէջ, վերջինս հատուցում կընէ դատական վճռով մը։

Ադանայի դէպքը ընկերութեանց պայմանագիրներուն մէջ ալ բացայայտ է. այդպիսի դէպքեր նախատեսուած են արդէն, և ընաւ հատուցում չկայ այդ հանգամանքներու մէջ։

— Կրնա՞ք օրինակներով հաստատել ատ, ինչ որ կըսէք։

— Անշուշտ։ Ռումէլիի մէջ՝ բուլգար գիւղերում պատահեցան նոյնանման դէպքեր, ու ընկերութիւնները հատուցում չըրին։ 1905-ին Սէլանիկի մէջ օսմ. բանկի մասնաճիւղը բուլգարական ռումբերէն 500 ոսկի վնաս տեսաւ, և ընկերութիւնը, օսմ. ապահովագրական ընկերութիւնը ըլլալով, որուն ագենտն է երկրին մէջ ամէն տեղ օսմ. բանկը, յանձն չառաւ վճարել և ոչ իսկ դանկ մը։ Նոյնպիսի դէպքեր տեղի ունեցան Ռուսիայի, Իտալիայի, Ֆրանսայի և մանաւանդ վերջերս Սպանիայի մէջ, և սակայն ոչ մէկ տեղ հատուցում եղաւ։ Արդ, ինչպէս կրնանք Ադանայի հրդեհներու փասները վճարել։

— Կան եղեր ընկերութիւններ, որոնք համաձայնած են վճարումներ ընել։

— Սկզբունքով ոչ մէկ ընկերութիւն յանձն կառնէ ատ. և որովհետև կան 8—900 ոսկիի պարտական ընկերութիւններ, գուցէ իրենց réclame մը ըլլալու համար, իբրև թէ հաւանութիւն ցոյց տուած ըլլան դիւրաւ համաձայնութեան գալու։ Պէտք չէ հաւատալ։

— Ուրեմն բան մը չէ՞ք խորհիր դուք։

— Իբրև հայ անհատ, ըրի՝ ինչ որ հնարաւոր էր, այսինքն խորհուրդ տալ, որ հաւաքական ուժ մը կազմուի դատարանի առջև և ամէն ջանք գործ դրուի որպէսզի դատապարտութիւն մը ձեռք բերուի։ Կազմուած է արդէն իրաւաբաններու մասնախումբը. հանրային շինութեանց մինիստրը, Գեւորգ էֆէնդի Հալաճեան, տուած է իր բոլոր աջակցութիւնը. կառավարութիւնն ալ որոշած է, որ ձրի դատավարութիւն ըլլայ։

— Անշուշտ, իբրև ներկայացուցիչ ընկերութեան, նոյնքան պարտականութիւն ունիք դէպի ձեր պաշտօնը։

— Իբրև պաշտօնեայ ըրի ինչ որ իմ սահմանիս ու պարտականութեանս մէջ է։ Երբ մեր փաստաբանը, Գրիգոր Զոհրապ, բացէ ի բաց յայտարարեց, թէ իր խղճին դէմ կը գտնէ այդ դատավարութեան մէջ միջամուխ ըլլալ, գրեցի ընկերութեան, որ մեր 15 տարուան փաստաբանը այս գործին միջամուխ ըլլալը իր խղճին դէմ կը համարի։ Ընկերութիւնը ղրկեց իր փաստաբանը։ Ու հիմա գործը կը մնայ առանց. դատավարութիւնը նշանակուած է հոկտ. 25-ին։ Թէ ինչ է ատոր մէջ իմ անհամաձայնութիւն, կամ հակառակութիւնս, ատ չեմ կրնար ըմբռնել։

— Չէ՞ք կարծեր որ ձեր՝ դէպի համաձայնութիւն հակումը կրնար ընդհանուր համաձայնութիւն բերել միւս ընկերութեանց մէջ։

— Ո՛չ ամենևին. իմ համաձայնութիւնս կրնար զօրել անհատական գործերուս մէջ. ընկերութեան մը ներկայացուցիչը ըլլալով, անոր բացորոշ օրէնքներուն բռնաբարողը չէի կրնար ըլլալ անշուշտ։ Ատ է որ ինծմէ կը պահանջուի։ Դժբաղդաբար, պաշտօնիս մէջ, բարեխղճութիւնս մեծ տեղ մը չունի. ու չեմ կրնար ստիպել, որ ֆրանս. ընկերութիւն մը, իր ունեցած ապահովագրական պայմաններուն հակառակ, յանձն առնէ տալ քանի մը տասնեակ հազարներ։ Որոնց անծանօթ են Ադանայի հրդեհին պատճառները։

— Մերիններէն զատ ուրիշ ազգեր ապահովագրութիւններ ունէի՞ն։

— Անշուշտ. Թիւրքեր, յոյներ, ասորիներ. և ոչ ոք խորհեցաւ դիմում ընել հատուցումի համար. որովհետև ընկերութեանց պայմանները, այդ մասին, շատ բացայայտ են։

— Վերջապէ՞ս։

— Պէտք է սպասել դատական վճիռի մը։

— Հակառակ պարագայի՞ն։

— Կարելի է մարդասիրական նպաստներ յուսալ, բայց ոչ հատուցում, որ խիստ հակառակ է սկզբունքի։ Ձեզի աւելին ըսեմ։ Պէտք է գիտնալ, որ ընկերութիւնը իր տրամադրութեանը ներքև ունի ուրիշներու դրամները, որոնք շահակից են և միևնոյն ատեն risque-ներուն յանձնառու՝ որոշ պայմաններու ներքև։ Արդ, ընկերութիւն մը ինչպէս յանձն կառնէ գումարներ տրամադրել այնպիսի պայմաններու, որոնք չէզոքացուած են իր օրէնքներով։

Պէտք եղածէն աւելի զբաղեցուցած էի պարոն տնօրէնը, հարցասիրած զինքը ամէն կէտերու մասին, ու երբ «մնաք բարով» պիտի ըսէի.

— Մի՛ մոռնաք,—ըսաւ,—որ ընկերութիւնը 3000 ոսկի կեանքի ապահովագրութիւնները վճարեց առանց վարանքի, որովհետև, այդ մասին, ընկերութիւնը որոշ պարտականութիւն ունէր, իսկ անօրէնութեանս առանձին գործը եղաւ գտնել ժառանգորդները, հեռուէն կամ մօտէն, և վճարումները ընել տալ նոյն իսկ polices-ները մէջտեղը չեղած ատեն։

Այս պարզ պատմութեան առջև, չկրցի ըմբռնել, թէ ինչպէս ներելի է չարամտութիւն և չկամութիւն ենթադրել Ս. Ղայսէրլեանի մասին։ Տարակարծիք եմ ուրիշներու. և, դարձեալ, ան կը մնայ, իմ կարծիքով, ազնիւ հայ, որ, իր պատիւովը, իր անհատական արժանիքովը, ըլլալով ֆրանս. մեծ ընկերութեան մը երկարամեայ տնօրէնը Թիւրքիոյ մէջ, ի հարկէն, ոչ իր աջակցութիւնը զլացած է ազգ. վարչական գործերու մէջ, և ոչ ալ իր դրամական նպաստները։ Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Դիլիջան, 4 նոյեմբերի

Վերջին ժամանակները տեղի ունեցան մի շարք գողութիւններ, որոնց պատճառով խախտուեց մեր անդորր կեանքը։

Դեռ ամառը սպառնական, անստորագիր նամակներով փող պահանջեցին տեղիս մի քանի ունևորներից։ Դրանից յետոյ գողացան տեղիս կար ու ձևի (Կ. Հ. Բարեգ. Ընկերութեան) դպրոցի 12 մեքենաները, որի համար հասարակութիւնը տուժեց մի քանի հարիւր րուբլի։ Սեպտեմբերին՝ այստեղից Ղազախ տանող ճանապարհի վրա՝ կողոպտեցին վաճառական Մեհրաբեանին, տանելով մի քանի հարիւր րուբլի, թէև աւազակները բռնվեցին և փողերը յետ առնվեցին։ Երկու շաբաթ առաջ գիշերով մտան տեղիս բացակայող զինուորական բժշկի բնակարանը։ Երեք օր առաջ էլ, գիշերով, կողոպտեցին Գ. Ասլանեանի և տ. Բաղալեանի խանութները, տանելով բաւականաչափ մանուֆակտուրի ապրանք։ Կասկածով ձերբակալված են մի քանի հոգի։ Ահա 3 օր է, ինչ պրիստաւը այստեղ քննութիւն է կատարում։ Նա այսօր յայտնեց հասարակութեանը, որ 10 տունը մի վստահելի մարդ տայ, որ իրանց տեղ հերթի. տեսնենք ինչով կը վերջանայ։ Այս խոշոր դէպքերից զատ, համարեա ամեն օր, տեղի էին ունենում մանր գողութիւններ. գողանում էին խալիչա, ոչխար, խոտ և այլն...

Հասարակութիւնը, յոգնած ու զզուած այս անիրաւութիւններից, յոյսը դրել է ոստիկանութեան վրա, իսկ վերջինս կարծես առիթ է փնտռում նման դէպքերի համար ամբողջ հասարակութեանը պատժելու։ Դիլիջանը խառնված է մօլօկաններով, զօրքով, ծառայողներով՝ հայ, վրացի, Թուրք և ռուս։ Մի բուռ գիւղական ժողովուրդը ինչպէս կարող է եղած դէպքերի համար պատասխանատուութիւն վերցնել...

Չը մոռանամ յիշել, որ գիտակից տարր կամ սակաւաթիւ անհատների խումբ, որ դէմ կենար այս անիրաւութիւններին, չը կայ։ Գուցէ ոչ մի տեղ հասարակութեան գիտակից ույժերի այնպիսի ամայութիւն չէ, ինչպէս Դիլիջանում։ Այդ կողմից մենք ուղղակի խղճալի ենք։ Հարեան

ԽՈՒԶԱՐԿՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔԸ

Բագու, 2 նոյեմբերի

Հոկտեմբերի 23-ին Ամիրեանի սեփական տան սենեակներից մէկում կատարված խուզարկութեան ժամանակ, ուր բաւական մեծ քանակութեամբ զէնքեր ու ռազմամթերքներ գտնվեցին, ինչպէս «Մշակին» ժամանակին գրել էի, ձերբակալվեցին կասկածով եօթը հայեր։

Ձերբակալվածներից մի մասին քննութեան ենթարկելուց յետոյ այսօր ազատ արձակեցին բանտից. դրանք են տնատէր Ռ. Ամիրեանը, նախկին կապալառու Լևոն Թադէոսեանը և վերջին օրերս կապալով վերցրած ու յետ վերադարձրած Տիգրան Ղարադաշեանը։

Տեղիս իշխանութիւնները մանրազնին քննութիւն կատարելուց յետոյ եկել են այն եզրակացութեան, որ այդ զէնքերը ոչ մի չար դիտաւորութեամբ չեն պահված կամ ի վնաս կառավարութեան գործադրվելու նպատակ չը կայ, այլ դրանք մնացած են հայ-Թուրքական կռուոցների սև օրերից, հայերի ինքնապաշտպանութեան ժամանակից։ Զէնքերը և ռազմամթերքները գտնված են գործադրութեան համար անպէտք, ժանգոտ և շատ կտորները փտած։

Սպասվում է, որ մնացեալ ձերբակալվածներին էլ քննութեան ենթարկելուց յետոյ ազատ թողնեն։

Բանտից ազատվածները խիստ գանգատվում են նոր բանտի հակառողջական պայմաններից։ Այդ նոր բանտը շինված է Շամախու ճանապարհ կոչված թաղում յայտնի հարուստ Հաջի Զէյնալ Աբդին Թաղիևի ծախսով։

Բանտը շինված է 5 յարկից ու ամբողջովին քարաշէն է։ Խոնաւութիւնը չափազանց է։

Այդ բանտի բանտարկեալների մեծամասնութիւնը մի ամիս առաջ տեղափոխված են Բայիլի բանտից, որը Բագւում ամենաամուրը և ամենակենտրոնական բանտն էր ճանաչված, սակայն այնտեղի բանտարկեալները, տեսնելով Թաղիևի կառուցած բանտը, փառք են տալիս Բայիլի բանտին։

Այդ բանտում կայ 500 բանտարկեալ, որի մեծ մասը քրիստոնեաներ են։

Ս. Դարաղաշ

ՂԱԶԱԽ ՔԱՂԱՔԻ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Ղազախ քաղաքը, որ իր մէջ պարունակող վարչական ու դատաստանական հաստատութիւններով, այլ և վաճառականական աչքի զարնող լայն շրջանառութեամբ իրաւամբ կենտրոնն է Ղազախ-Շամշադինի ընդարձակ գաւառի, զանազան ազգութիւններից կազմված բնակչութեան մէջ հայերս ունի հարիւրի չափ հայ ծխեր, որոնք մանաւանդ 1905 թւի Թալանից յետոյ առաջ եկած օտարազգի վաճառականների աջողութիւնների և գրաւած լայն ասպարէզի շնորհիւ, կորցնելով իրանց հաւասարակշռութիւնը՝ կորցնելու վրա են նաև այն դիրքը, որ պատկանում էր նրանց—հայ գիւղերին որպէս օրինակ ծառայելը կրթական և կուլտուրական ասպարէզում։

Սակայն չէ կարելի ասել թէ Ղազախի հայ համայնքի կատարելիք դերը վերջացել է. իրաւ է, նա անտեսական տագնապի մէջ՝ ներկայումս սուղ օրեր է անց կացնում, բայց վերակենդանութեան նշաններ էլ ցոյց է տալիս։ Թէև այդ պրօցեսը կատարվում է այնքան դանդաղ, որ շատ քիչ է տարբերվում անշարժ ու մեռելային դրութիւնից, բայց և այնպէս մի բան կատարվում է, որը և ծառայում է որպէս գրաւական մեր վերակենդանութեան։

Ղազախի հայ հասարակութիւնը իր կենսունակութեան նշանները ցոյց է տալիս ծխական ուսումնարանի և բարեգործական ճիւղի պահպանութեան գործերում, որի համար սակայն որքան ճիգ ու ջանք է թափում, դարձեալ չէ կարողանում զերծ մնալ մուրացկանութիւնից։

Չէ կարելի ժխտել այն հանգամանքը, որ Թուրք-հայկական ընդհարումներն իրանց կործանիչ կնիքը դրել են և գաւառիս գիւղերի վրա, որոնք ինքնապաշտպանութեան գործում սպառեցին իրանց ստացուածքը, սակայն Ղազախ քաղաքի կրած հարուածը Թալանի ու հրդեհումների միջոցով այնպիսի անկում առաջացրեց, որի վերականգնման համար երկար տարիներ են հարկաւոր. այդ իսկ պատճառով իւրաքանչիւր կրթական և կուլտուրական ձեռնարկութեան մէջ մենք կարօտ ենք օտարների օժանդակութեան։

Ուրիշները, եթէ իրանց մէջ չունենն հարուստներ, գոնէ օտարութեան մէջ ունենն երիտասարդութիւն կամ աջողութեան մէջ գտնվող կարողութեան տէր անհատներ, որոնք իրանց գործունէութեամբ, բարոյական կամ նիւթական աջակցութեամբ, կտակներով և նուիրաբերութեամբ յաճախակի օգնութեան են հասնում։ Ղազախ քաղաքը այդպէս չէ. մենք բոլորս օտարներ, վերաբնակիչներ ենք, ուստի մեզնից հեռացողը ընդմիշտ սառչում-օտարանում է և խաչ է դնում Ղազախ քաղաքի վրա՝ թողնելով մեզ տապակվել մեր իսկ իւղում։

Թէ մեր և թէ գաւառի համար խիստ անհրաժեշտ է Ղազախ քաղաքի դպրոցի բարգաւաճումը և բարեգործական ճիւղի գոյութիւնը, բայց սրանցից առաջինը մեր փոքր համայնքի ույժերից վեր իր մեծածախս պահանջներով այնպիսի ծանր խնդիր է դրել մեր առաջ, որի լուծման համար անպայման կարօտ ենք դրսի օգնութեան։

Նախանցեալ տարվան փորձը, ուսումնարանի գոյութիւնը պահպանելու համայնական ընդհանուր աջակցութեամբ, ամուլկի ու խոչընդոտների հանդիպեց. այնուհետև գործի ծանրութիւնը բաժին մնաց երեխայատէրերին որի պատճառով և անցեալ ուսումնական տարին անց կացրինք օրհասական ջանքերով. չորս բաժանմունք և երկու ուսուցիչ պահող մեր դպրոցը իր աննախանձելի բիւջէով այնպիսի հիասթափութիւն առաջ բերեց, որ մենք, հակառակ մեր եռանդին և գործունէութեան, ներկայումս կանգնած ենք մեր փայփայած դպրոցի փակման կամ կրճատման վտանգի առաջ։

Սաստիկ աղեկտուր էր մայիսի 30-ի տեսարանը մեր դպրոցում, երբ երրորդ և չորրորդ բաժանման աշակերտ ու աշակերտուհիներին ուսման վկայագրերը բաժանելիս չէինք կարողանում դրականապէս յայտնել, թէ նրանք միւս տարին կարո՞ղ են շարունակել իրանց ուսումը մեր դպրոցում թէ՞ ոչ, և նրանք դառնապէս արտասուելով չէին ուզում հեռանալ այն շինութեան պատերից, որի մէջ ճաշակել էին ուսման սէրն ու քաղցրութիւնը և թերևս ընդ միշտ բաժանվում էին նրանից։

Որքան զգացված էինք մենք ինքներս, ուսուցիչ ու հոգաբարձու, երբ անձեռնհաս էինք նրանց մխիթարական մի բան ասելու։

Հինգերորդ բաժանմունք ունենալու մասին առ այժմ երազել անգամ չենք կարող, քանի որ մեր դպրոցական խարխուլ ու փոքրիկ շինութիւնն իսկ անհամապատասխան է պահանջին, ուստի մեր համեստ և միակ իղձն է գոնէ չորրորդ բաժանմունքը ազատել վերահաս վտանգից, որի համար մեր ծանր վիճակը դնելով հրապարակի վրա, Թախանձագինս խնդրում ենք որևէ հաստատութեան, ընկերութեան կամ մասնաւոր բարեգործ անհատի հովանաւորութիւնը։

Մեր պահանջը համեստ է. մեր չորս բաժանմունքանոց դպրոցի գոյութեան յարատևման համար անհրաժեշտ է առնուազն 800 րուբլի, որի 300-ը սպասում ենք դրսից։ Արդեօք ո՞վ կարող է մեզ մի տարի կամ տարեկան նպաստել այդքան գումարով և մեր ուսումնատենչ մանկանց բարեբարը հանդիսանալ, ընդմիշտ ազատելով մեզ այն հոգեմաշ դրութիւնից, որի մէջ տանջվել ու տապակվել ենք անցեալ ուսումնական տարում։

Կեանքի մէջ նպաստներ շատ են տրվում այս ու այն հաստատութեան, ուր ոչ մի գործ չէ կատարվում, սակայն պէտք է նախ քննել արժանաւորութիւնը, ապա ձեռք մեկնել օգնութեան։ Խոստանում ենք միշտ և ամեն կերպ ապացուցանել, որ մեզ տրվելիք նպաստը կը բեղմնաւորվի տասնապատիկ ու հարիւրապատիկ։

Ուրեմն եթէ կայ մի բարերար հաստատութիւն կամ անձնաւորութիւն, որի սրտին մօտ է գաւառիս կենտրոն Թալանված փոքրիկ քաղաքիս ծխական դպրոցի գոյութեան պահպանութիւնը, և նա ձեռնհաս է մեր ձայնին արձագանք տալու, թող բարի լինի հաղորդելու մեզ «Մշակի» խմբագրութեան միջոցով։

Ղազախ Զ. ք. Ապրեսեան

ԱՐՁԱՆ ԱՅՎԱԶՕՎՍԿՈՒՆ

Քսանական Թւականներին մի աղքատ, ոտաբոբիկ տղայ հարաւային գեղեցիկ դէմքով Թէոդոսիայի ցանկապատերի վրա ածուխով և կաւիճով նկարում էր նաւակներ։

Վաթսուն տարուց յետոյ դա արդէն մեծ նկարիչ էր, եւրոպական հռչակով, բարեկամ Թագաւորների անձանց, իսկական գաղտնի խորհրդական, ասպետ շատ շքանշանների, և այն էլ միլիօնատէր։

Արդեօք պէ՞տք է այդ բաղդաւորի և բաղդի սիրելիի անունը տալ։ Ի հարկէ, բոլորի շրթունքների վրա Այվազօվսկու անունն է։

Հայրենի Թէոդոսիայի համար Այվազօվսկին չէր խնայում իր միլիօնները։ Նա միայնակ բացառիկ բարձրութեան հասցրեց այդ քաղաքի բարեկարգութիւնը։ Թէոդոսիացիները ջուր չունէին, Այվազօվսկին ջուր տուեց նրանց։ Նրա առասպելական ջրանցքների մասին իր ժամանակ խօսում էր ամբողջ Ռուսաստանը։

Այժմ երախտագէտ Թէոդոսիացիները արձան են դնում Այվազօվսկու համար։ Ոչ թէ գերեզմանի վրա, այլ իսկական մեծ արձան, որը պէտք է զարդարէ քաղաքը։

Դա կը լինի Ռուսաստանում առաջին արձանը հայրենի նկարչին։

Այդ արձանի կառուցմանը մեծ մասնակցութիւն է ընդունում և մեծ ծովանկարչի ամուսնացած դուստրը՝ տիկին Լասպի։

Արձանի նախագիծը յանձնված է կին-քանդակագործ Իւ. Ն. Բրազօլ-Զասլավսկայային, որը, երկար տարիների ջանքերի շնորհիւ Ռուսաստանում և արտասահմանում, տաղանդաւոր քանդակագործ է դարձել։

Այվազօվսկին ներկայացված է իր հայրենի և սրտին մօտ տարերքի մէջ։ Ներկի տախտակը ձեռքին՝ նստած է նա քարի վրա, դէպի ուր փրփրադէզ բարձրանում են ծովային ալիքները։ Այդ կանաչ ալիքներն օրրում են իրանց փրփրադէզ կատարների վրա չարաճճի կերպով խայտացող ջրային յաւերժահարսներին։

Եւ հէնց այդտեղ անդունդից դուրս լողաց մօրուքաւոր և Թագով Պօսէյդօն չաստուածը, կարկառելով պսակը նրան, ով կէս դար շարունակ բանաստեղծօրէն և հմայիչ կերպով երգում էր նրա՝ Պօսէյդօնի իշխանութեան տակ գտնվող խորհրդաւոր գեղեցիկ Թագաւորութիւնը... («Б. В.»)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվ նոյեմբերի 7-ի երեկոյեան որսի գնաց Բիւրդամիր։

✦ Կովկասի Փոխարքայի նոր օգնական սենատոր Վատացին ներկայացան Փոխարքայի խորհրդի անդամները, դիւանատան կառավարիչը և փոխ-կառավարիչը, նահանգապետը և փոխ-նահանգապետը, քաղաքացիական մասերի կառավարիչ անձերը։ Ներկայացնում էր բոլորին գ. խ. Մ. Հակկել։ Սենատոր Վատացին դիմեց ներկայացողներին մի ճառով, որով յորդոր կարդաց միահամուռ գործակցութեան։

✦ Կովկասի Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական սենատոր Վատացին արդէն ստանձնել է իր պաշտօնը։

✦ Գանձակի նահանգապետը Կովկասի Փոխարքայի դիւանատան հարցմունքին պատասխանել է, որ այս տարի բոլոր մթերքների բերքը՝ իրան յանձնված նահանգում՝ ստացվեց բոլորովին բաւարար, և տեղական ազգաբնակութիւնը ընաւ կարիք չէ ունենալու մինչև գալ տարի։ Ճիշդ է, մի քանի գիւղերից խնդրագրեր են ստացվում, բայց պատճառը ոչ թէ անբերրիութիւնն է, այլ կարկտի հասցրած վնասը, որով խնդրատուները միջնորդում են թեթևացնել հարկերի և տուրքերի բեռը։

✦ Երկրագործութեան գլխաւոր կառավարչի Կովկասի լիազօրը Փոխարքայի խորհրդից 12,000 րուբլի է խնդրում զէմստվային գումարների մնացորդից Ջէվադի հարաւային մասում և Լէնքօրանի գաւառի հիւսիսային մասում 150 հազար դեսեատին տարածութեամբ երևցած դաշտամկները ոչնչացնելու համար։

✦ Ի նկատի ունենալով, որ այս տարի Թիֆլիսի և Քութայիսի նահանգներում անբերրիութիւնը համարեա համատարած երևոյթ էր, Կովկասի Փոխարքայի դիւանատունը առաջարկեց նահանգական և գաւառական իշխանութիւններին մանրամասն քննութիւն կատարել առանձին մասնաժողովների միջոցով անտեսական դրութեան մասին և այդ մանրամասն տեղեկութիւնները շուտով ներկայացնել դիւանատանը։

✦ Կիրակի օրը քաղ. դումայի դահլիճում տեղի ունեցաւ Թիֆլիսի ժուռնալիստների ընկ. անդամների ընդհանուր ժողովը, ուր պարզվեց, որ ընկերութիւնը ներկայումս ունի ընդամենը 17 անդամ։ Այդ օրը ընդունվեցին հինգ նոր անդամներ։ Որոշվեց մի քանի կարևոր փոփոխութիւններ մտցնել ընկերութեան կանոնադրութեան մէջ։ Վերջում կայացան վարչական մարմնի ընտրութիւնները։

✦ Կիրակի օրը Վելիամինօվսկայա փողոցում զինւորական և քաղաքացիական հաստատութիւնների ներկայացուցիչների ներկայութեամբ օծվեց Թիֆլիսի ոստիկանապետի կառավարութեան նոր շինութիւնը։

✦ Զինւորական դրութիւնը անդրկովկասեան երկաթուղային գծից վերցնելը սպասվում է նոյեմբերի 15-ին։ Միաժամանակ անդրկովկասեան երկաթուղիների կառավարիչ գ.-մ. Նէյգէբաուէրը, «Баку»-ի արժանահաւատ աղբիւրներից ստացած տեղեկութիւնների համաձայն, նշանակվելու է բրիգադայի կառավարիչ Օդեսսայում, իսկ նրա պաշտօնում նշանակվում է ինժեներ Ակօրէնկօ։

✦ Մոսկվայի «Руль» լրագրի մէջ կարդում ենք. «Նոյեմբերի 1-ին Լազարեան ճեմարանում կայացաւ գրական ցերեկոյթ, որ կազմել էր հայ բանասիրական նորակազմ ակումբը և որ նուիրված էր հայ գրող Խ. Աբովեանի յիշատակին։ Այդ ցերեկոյթը աւելորդ անգամ ապացուցեց, թէ տեղական հայ գաղութը, ի դէմս իր բուրժուազական մասի, օտար է մայրենի գրականութեան ջահերին. նա փայլում էր իր բացակայութեամբ այդ համակրելի ձեռնարկութեան մէջ։ Աբովեանի մասին ներածական ճառը կարդաց ճեմարանի ուսուցիչ Կուսիկեանը, որ վառ և պատկերաւոր կերպով բնորոշեց հայոց նորագոյն գրականութեան նախահայր Աբովեանի անձնաւորութիւնը։ Ապա բանաստեղծ Ալ. Ծատուրեանը և ուսանող Խանզադեանը կարդացին կտորներ Աբովեանի երկերից։ Առանձին աջողութիւն ունեցաւ բանաստեղծ Ծատուրեանի ընթերցումը։ Հայ մատաղ սերունդը, որ լցրել էր լսարանը, եռանդագին ողջունեց դասախօսին և ցերեկոյթը կազմողներին»։

✦ Մոսկվայում բացվել է նորերս հայկական մի նոր կլուբ, որի անդամները կարող են լինել միայն հայեր։ Այդ առիթով «Руль» լրագիրը նկատում է, թէ իբր Պետերբուրգում կազմված հայոց կլուբի անդամ կարող են լինել միայն հայ-լուսաւորչականները։ Եթէ ճիշդ է այս լուրը, պէտք է շնորհաւորել Պետերբուրգի ինտելլիգենտ հայ գաղութը, որ XX դարում, Պետերբուրգի պէս մտաւոր կենտրոնում, դաւանական հարցերով է զբաղվում և միայն լուսաւորչականին են հայ ճանաչում։

✦ Առաջիկայ հինգշաբթի օրը, նոյեմբերի 12-ին, տեղի կունենայ Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան ընդհանուր ժողովը քննելու մի շարք խնդիրներ, վերաբերեալ զեմստվային ինքնավարութեան, լեռնային ալպիական տնտեսութեան, Թռչնապահութեան և ընթացիկ մի քանի գործերի։

✦ Կովկասեան զօրաբանակի ընդհանուր հրամանատարը հնարաւոր է գտել Վարլամ Զուբինիձէի, Սիմոն Մեսխարաշվիլու և Սօսիկօ Մեսխարաշվիլու մահվան պատիժը փոխարինել 20 տարով տաժանակիր աշխատանքներով։

✦ Այս օրերս Թիֆլիս կը գայ մի քանի դասախօսութիւններ կարդալու համար տնտեսագէտ Տօտօմեանը։

✦ Նոյեմբ. 17-ին Թիֆլիսի կրուժոկի շինութեան մէջ 2-րդ իգական գիմնազիայի օգտին կը կայանայ մի ներկայացում պարերով։

✦ Նոյեմբերի 8-ին Թիֆլիսում վախճանվեց III արական գիմնազիայի վերատեսուչ Ի. Ն. Գօրօդէնսկին։

✦ «Зак.»-ին հաղորդում են, որ Պետական Դումայի անդամ Պուրիշկևիչն իր կեանքը ապահովագրել է «Россія» ընկերութեան մէջ 25,000 րուբլով։

✦ Սղնախի նախկին գաւառապետ իշխ. Բարաթօվը նշանակվում է հաշտարար միջնորդ Բօրչալուի գաւառում։ («Т. Л.»)

✦ Նոյեմբերի 13-ին Զուբալովեան ժողովրդական տանը կը կայանայ ժողովրդական համերգ, նուիրված Չայկօվսկուն։ Համերգից առաջ երաժիշտ Տէր-Դաւթեան հասարակութեանը կը ծանօթացնէ նոր հիմնված երաժշտական ընկերութեան հետ, իսկ Մակսիմօվը մի դասախօսութիւն կը կարդայ Չայկօվսկու մասին։

✦ Վրաց «Դրօէբա» լրագիրը հաղորդում է, որ մի խումբ գերմանացիներ իշխ. Մուխրանսկուց Գօրու գաւառում գնել են 500 դեսեատին հերկելի, ցանելու հող։ Այս օրերս այստեղ են հասել 40 գերմանացի ընտանիքներ։

✦ Բագւում քաղաքագլուխը արգելել է դասախօսութիւններ կարդալ գնդապետ Բէնինգսէնին՝ Քրիստոսի երկրորդ գալստեան, ինչպէս և Բօգդևիչ-Բէլևիչին՝ Կովկասում զէմստվային հաստատութիւններ մտցնելու մասին։

✦ Բագուի քաղաքապետն արգելել է Ալի-Մարդան-բէգ Թօփչիբաշևին կարդալ դասախօսութիւն զէմստվօյի մասին։

✦ Կասպիական - չերնոմորական ընկ. Բիբի-Հէյբաթի նաւթահանքերում այս օրերս ֆոնտանը խփել է կէս միլիօնից աւելի պուդ նաւթ։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Նոյեմբերի 7-ին, երեկոյեան ժամը $5^1/_2$-ին, Ծղնէտսկայա փողոցում, Վարավիս-խեվի կամուրջի վրա ատրճանակի 6 հարուածով սպանվեց Թիֆլիսեցի Մակար Գորշենինը՝ 45 տարեկան, որ գրաշար էր վրաց հրատարակչական ընկերութեան տպարանում։ Սպանողները 5 հոգի էին։ Քննութիւնը պարզեց, որ սպանութիւնը կատարված է անձնական վրէժառութիւնից։ Կասկածով ոստիկանական պաշտօնեաները ձերբակալել են Թիֆլիսեցիներ Իոսիֆ Կիրկաշեձէին, Գէորգի Մայսուրաձէին և գրօզնեցի Գրիգոր Ցովհաննիսեանին։

◆ Նոյեմբերի 8-ին Վորոնցովի արձանի մօտերը անյայտ մարդիկ արդվինցի Բաղդասար Նաղունեանի գրպանից հանել են 148 ռ. 60 կոպէկ։

◆ Նոյեմբերի 8-ին, գիշերվայ ժամը 1-ին Անդրէեվսկի տուպիկում գտել են մի նորածին մանուկ։—Նոյեմբերի 8-ին XI քաղաքամասում զինւոր պահակները ոստիկանների օգնութեամբ շուրջկալ կատարեցին և ձերբակալեցին 42 անգործ և անանցաթուղթ մարդկանց։

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

◆ «Ժամանակ» Թերթը հաղորդում է, որ դաշնակցական գործիչները Կ. Պօլսում որոշելով միտինգներ կազմել հայոց եկեղեցիներում՝ գնացել են Կում-Կափուի Մայր եկեղեցին, բայց այդտեղ զօրաւոր ընդդիմադրութեան հանդիպելով՝ անցել են Սկիւտար, ուր եկեղեցում սկսել են բանախօսել եկեղեցականութեան և իրանց հակառակորդների դէմ։ Մի այլ եկեղեցում, Սամաթիա Թաղամասում, երբ Յարութիւն Շահրիկեանը, ղառնացած՝ որ ազգ. ժողովը սեւացրեց իրան, սկսում է իր հայհոյական բանախօսութիւնը հակա-դաշնակցականների դէմ, ժողովուրդը պատասխանում է նրան սուլումներով, ձեռքի, ոտքի Թոփիւններով, և այնպիսի աղմուկ է առաջանում, որ ոստիկանութիւնը հարկ է տեսնում միջամտել։ Հայոց պատրիարքարանը, տեսնելով այս ամենը, հրահանգ է տուել բոլոր Թաղական խորհուրդներին, որ այսուհետև որեւէ կուսակցութեան չը Թոյլատրվի եկեղեցիների, դպրոցների և ազգին վերաբերող շէնքերի մէջ միտինգներ և հաւաքոյթներ կազմել։ Կ. Պօլսի մամուլը ողջունում է այս կարգադրութիւնը, որովհետև այդ միտինգները խաղաղութեան կարօտ ժողովրդի մէջ երկպառակութիւն են արծարծում։

◆ Վանից ստացված տեղեկութիւնները յայտնելով Թէ յայտնի Մուսա-բէյի գրգռութեամբ հայկական Ջարդի հաւանականութիւն կայ, պատրիարքարանը անմիջապէս դիմեց ներքին գործերի մինիստրին, որ հեռագրով պատուիրեց կուսակալ Բէքիր Սամի բէյին ջանք չը խնայել խռովութիւնների առաջն առնելու։

◆ Հոկտ. 23-ին կայացած ազգային երեսփոխանական ժողովը կատարել է նոր քաղաքական ժողովի ընտրութիւնը և ընտրել է հետեւեալ 14 անձանց անդամներ այդ ժողովի, այն է՝ Մինաս Չերազ, որ ստացել է 65 ձայն (բոլոր ձայները եղել են 67), Արամ Հալաճեան—42 ձայն, դոքտոր Սեդրաքեան—41 ձ., Մանուկ Ազարեան—39 ձ.։ Այս 4-ը ընտրվել են քուէների բացարձակ առաւելութեամբ, իսկ հետեւեալ 10-ը համեմատական առաւելութեամբ, այն է՝ Բիւզանդ Քէչեան, Հմ. Խոսրովեան, Յակոբ Պաշրի, դոքտոր Թորգոմեան, Ալ. Թոփաչեան, դոքտոր Ն. Տաղաւարեան, Ց. Եսայեան, Յ. Պոյաճեան, Ս. Սուէն, Հ. Խօճասարեան։

Այդ ընտրութեամբ և Թէ այն հանգամանքով, որ դաշնակցականների կանդիդատ Յարութիւն Շահրիկեանը ստացել է միայն 2 քուէ, ազգային ժողովը պարզ ցոյց է տալիս իր տրամադրութիւնը՝ չը յանձնել այլ ևս ազգային գործերի ղեկը այդպիսի անձանց։ Սակայն ազգային ժողովի յաջորդ նիստում, որ կայացել է հոկտեմբերի 30-ին, մի քանի անդամներ հարց են յարուցել, Թէ աննպատակայարմար է կուսակցականներին բոլորովին վտարել քաղաքական ժողովի կազմից, այլ գոնէ 2 հոգի պէտք է ընտրել։ Յայտնվել է նոյնպէս, որ ընտրված 14 անդամներից 6-ը, այն է՝ Մ. Չերազ, Յ. Եսայեան, դոքտոր Սեդրաքեան, դոքտոր Թորգոմեան, դոքտոր Տաղաւարեան և Բ. Քէչեան հրաժարական են տուել։ Սակայն Թորգոմեան և Տաղաւարեան համաձայնեցին յետ առնել իրանց հրաժարականը, և քաղաքական ժողովը կազմվեց առ այժմ 10 անդամներից։

◆ Ի նկատի ունենալով Աղթամարի վանքի կողոպտման հարցի կարեւորութիւնը, հարկաւոր ենք համարում յայտնել, որ հայոց ազգային երեսփոխանական ժողովը նոյեմբերի 23-ին կայացած իր նիստում զբաղվել է այդ հարցով և լսել քննիչ յանձնաժողովի տեղեկագիրը։ Այդ տեղեկագրով քննիչ յանձնաժողովը հաստատում է, որ, արդարև, պատրիարքարանը բողոքներ են եկել, Թէ Աղթամարի կաթողիկոսական աթոռին վերաբերող բոլոր 34 վանքերը ընդհանրապէս և Աղթամարի մայր-վանքը մասնաւորապէս աւերի, կողոպուտի ենթարկված են, աթոռապատկան Թանգարժէք հնութիւնները, զարդեր և անօթներ անհատական շռայլութեանց համար շահագործված են, վանքերը դայթակղավայրեր և ուսումնարանները, մասնաւորապէս Աղթամարի նորակառոյց դպրոցը, անկրօնութեան և հակաեկեղեցական շարժման կենտրոններ են դարձած։ Նաև բողոքներ են եկել, Թէ այդ զեղծումները և գայթակղութիւնները կատարել են ռուսահայ գործող ոմն Իշխանը, սրա ընկեր գանձակեցի Արամը (իսկական անունը Սարգիս, «Փաշա» կոչված) և այլ պարոններ ու «նոր-սերնդականներ»։ Նաև բողոքների մէջ ասված է, որ, կաթողիկոսական տեղապահ ծերունի Յովսէփ եպիսկոպոսը, գործողների «անաբեկիչ սպառնալիքին տակ սահմռկած է» և անկարող է եղել յայտնել այդ զեղծումների մասին։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Հոկտ. 30-ին, առևտրի և արդիւնաբերութեան մինիստր Տիմիրեազեվի նախագահութեամբ Պետերբուրգում կայացաւ ռուս-անգլիական առևտրական պալատի խորհրդի նիստը, որ նուիրված էր նախագծվող ռուսական ցուցահանդէսի հարցին Լոնդոնում։ Նիստը այցելեց որպէս պատւաւոր հիւր Մորգան։ Վիճաբանութիւններն առաջացրին կարծիքների ջերմ փոխանակութիւն։ Մորգան ճառ արտասանեց, որի մէջ մատնացոյց արեց անգլիացիների Թոյլ ծանօթութեան վրա Ռուսաստանի և նրա բնական հարստութիւնների հետ և այն համոզմունքը յայտնեց, որ նախագծվող ցուցահանդէսը կարող է մեծ դեր կատարել երկու ազգերի տնտեսական և քաղաքական մերձաւորութեան գործում։ Առ հասարակ Լոնդոնի առևտրական պալատը, որի ներկայացուցիչն է հանդիսանում նա, իր կողմից ամեն ջանք գործ կը դնէ վերոյիշեալ ցուցահանդէսի աջողութիւնը ապահովելու համար։ («Р. В.»)

◆ Ժողովրդական կրթութեան յանձնաժողովը Դումայում քննելով ընդհանուր ուսման նախագիծը՝ լրացրեց նրան հետեւեալ ծանօթութեամբ. «Ուսուցիչները ռուս դպրոցներում պէտք է լինեն ռուսահպատակ ուղղափառներ, իսկ օտարացեղ դպրոցներում կարող են լինել օտարադաւան անձինք»։ («Р. У.»)

◆ Նոյեմբերի 30-ին կայացաւ Պետական Խորհրդի այն յատուկ յանձնաժողովի նիստը, որ քննում է տօները կրճատելու նախագիծը։ Ներքին գործերի մինիստրութեան ներկայացուցիչ Խարլամով յայտնեց, որ մինիստրութիւնը համաձայն չէ նախագծի տեսակէտի հետ այդ հարցի վերաբերմամբ։ Ուղղափառ պետութեան մէջ, ասաց նա, խօսք չէ կարող լինել ընդհանուր տօները վերացնելու մասին, այդ միայն կարելի է տեղական տօների վերաբերմամբ։ Յանձնաժողովը հնարաւոր համարեց այն 92 տօն օրերից, որոնք նախագծով պէտք է վերացվէին, կրճատել 25 տօներ։ («Н. В.»)

◆ Պետերբուրգում կազմվեց բազմազաւակ ընտանիքների հայրերի և մայրերի մի նոր բարեգործական փոխադարձ օգնութեան ընկերութիւն, որի նպատակն է բարւոքել ոչ պակաս քան 3 երեխայ ունեցող ընտանիքների նիւթական դրութիւնը։ Ներկայումս ընկերութիւնը դիմեց հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութեանը, որ ընկերութեան անդամների այն երեխաներին, որոնք սովորում են մայրաքաղաքի դպրոցներում և բնակվում են քաղաքից դուրս տեղերում, իրաւունք տրվի ձրի երթեւեկել երկաթուղով։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Զուբալովեան ժողովրդական տանը կիրակի օրը Սևումեանի խումբը ներկայացրեց Լևոն Մանուէլեանի «Նկարիչ Թաշճեան» 4 գործ. դրաման։

Այս պիէսը Լևոն Մանուէլեանի լաւագոյն գրուածքների շարքում պիտի դասել։ Պիէսի տիպերը լաւ ուսումնասիրված են և ամբողջացված։ Դրամայի առանցքը նկարիչ Թաշճեանն է, որի տաղանդը մատերիալիստական անխուսափելի հարուածի տակ մահվան է դատապարտվում։ Դրամայի մի յատկանիչ կողմն էլ այն սպանիչ վերաբերմունքի արտացոլումն է, որ ցոյց է տալիս առհասարակ հայ հասարակութիւնը դէպի գեղարուեստը։

Սևումեան շատ լաւ ուսումնասիրել էր Միքայէլին. Նա սկզբից մինչև վերջ մնում էր նրա դերի մէջ, որով մեր առաջ պատկերացաւ ուրոյն Թաշճեան, որ անհաստատակամութեան շնորհիւ ազդվեց միջավայրից և յանուն իր ընտանիքի մի կտոր հացի, մեռցրեց իր շնորհքը, Թողեց իր սիրած արուեստը և, չը դիմանալով վերջ ի վերջոյ իր անկմանը, վերածնվելու բաղձանքը հոգու մէջ՝ ընկնում է յաւիտեան կեանքի ծանր բեռից Ջարդված, մարմնով հիւծված և քայքայված։

Օր. Սոլովեանի խաղը սառն էր։ Նա չը ներկայացրեց Փլորային այն կնոջ նման, որ, լինելով Միքայէլի հակապատկերը, իր տրադիցիօն հասկացողութեամբ սկզբում մաքառում է իր ամուսնու իղձերի դէմ, և սակայն վերջում, Թէև անօգուտ "այլևս" իր ընկերուհի բժշկուհի Հռիփսիմէի խօսքերի (Զմշկեան) և իր ամուսնու տանջանքների ազդեցութեան տակ կերպարանափոխվում է, դառնալով լուսամիտ և պատրաստ ծառայելու Միքայէլի գաղափարի վերակենդանութեան համար…

Բնորոշ և սահուն կատարեցին Թարխանեան՝ Եղիսաբէթի, Տէր-Առաքելեան՝ Վահանի, Տէր-Յովհաննիսեան՝ բժշկի և Փիրումեան՝ Արգարի դերերը։

Պէտք է նկատենք որ ինչպէս անցեալ, այս անգամ ևս միջարարները երկար էին։

Հետեւեալ ներկայացումը կը լինի ի յիշատակ Շիլլէրի ծննդեան 150-ամեայ տարեդարձի, որի առիթով կը խաղացվի նրա «Խարդաւանք և սէր» ողբերգութիւնը։ Ե.

—

Ապարդիւն տեղը չեն ասված այն իմաստալից խօսքերը, Թէ «առաջինն եղեցի յետին և յետինն առաջին»։

Այս խօսքերը յիշեցի ակամայից, երբ ամսիս 6-ին մտայ վրաց Թատրոն, Թուրքերէն ներկայացման ժամանակ, և տեսայ դահլիճը ծայրէ ի ծայր լիքը, Թուրք հասարակութեամբ։ Այն Թուրքերը, որոնց երբեմն մեզանից շատերը անկուլտուրական, յետամնաց են համարել, տեսում ենք, հենց այդ Թուրքերը, լցնելով Թատրոնը, ամենայն ուշադրութեամբ ոչ Թէ լսում, այլ կլանում էին դերակատարների իւրաքանչիւրի խօսքերը։

Մենք խորհուրդ կը տանք մեր յետամնաց «առաջիններին» օրինակ վերցնել «յետին» Թուրքերից, Թէ ինչպէս պէտք է յաճախել մայրենի Թատրոնը և այդպիսով զարկ տալ մայրենի Թատրոնի առաջադիմութեանը։

Որպէս ջերմ նախանձախնդիր մեր դաբաւոր հարևանների կուլտուրական առաջադիմութեան, մենք անհուն բաւականութեամբ դիտում էինք Թուրքերի մէջ առաջ եկած զարգանալու, առաջադիմելու բուռն տենչանքը և զգում էինք մեզ հոգեպէս միխիթարված։

Թուրք դերասաններն այդ գիշեր խաղում էին «Նադիր շահ» անունով 4 գործ. մի պատմական պիէս, որի սիւժէտը վերցված է յայտնի «Չէնկիզէն» աւազակապետ Նադիրի կեանքից, որը վերջում շահ եղաւ։

Պիէսի հեղինակը Նադիրին ներկայացրել է որպէս ջերմ հայրենասէր մի անձնաւորութիւն, որը նուիրված է հայրենիքի բարգաւաճութեան և երջանկացման գործին, կռիւ յայտարարելով «մուֆթախօռ մոլլաներին», հոգևորականութեանը, որը ստրկացրել է ամբողջ Իրանը, իւրացնելով ահագին կալուածներ, ծծելով պարսիկ աշխատաւորութեան արիւնը։

Սակայն դաւադիր տարրերը վերջում նրա կեանքի դէմ մահափորձ կատարելով սպանում են Նադիրին, որից յետոյ Իրանը նորից մնում է առանց խելացի ղեկավարի և ընկնում ամենաողբալի դրութեան մէջ։

Որպէս նոր գործ, անշուշտ մենք չենք կարող խստապահանջ լինել Թէ պիէսի և Թէ խաղի նկատմամբ։ Անշուշտ կան Թերութիւններ և տեղ-տեղ նոյնիսկ դէֆեկտներ, բայց այդ բոլորը ժամանակի ընԹացքում կը վերանան։

Գովելի է Թուրք դերասանների եռանդը։ Առանձնապէս մեզ վրա լաւ տպաւորութիւն է Թողնում այն հանգամանքը, որ Թուրք և պարսիկ երիտասարդները ձեռք ձեռքի տուած են գործում, որպիսի երևոյթը գեղեցիկ գրաւական է Թուրքական Թատրոնի շուտափոյթ առաջադիմութեան գործի։

Պարսիկ լուսամիտ երիտասարդ Քրանի Ջանքերը, որպէս ղեկավարի, գովելի են։

Դերասանները գանգատվում են, որ չը կան Թուրք դերասանուհիներ, որպիսի բացը մեծ արգելքներ է առաջացնում։ Այդ բացը առ այժմս լրացնում են ռուս դերասանուհիները, որոնք բաւական աջող կերպով են խաղում։ Մի հանգամանք, որը չը վրիպեց մեր ուշադրութիւնից, այդ այն է, որ Թուրք կինն էլ սկսել է յաճախել Թատրոն, անուշադիր Թողնելով նախապաշարված մարդկանց սաէ-կոսէները։

Դերասանները գանգատվում են, որ գլխաւորապէս հոգևորականներն են արգելքներ յարուցանում իրանց դէմ, որը անշուշտ շատ ցաւալի երևոյթ է։ Սակայն ամեն մի գործ, որ նոր է, նրա դէմ անպակաս կը լինին նոյնանման խոչընդոտներ։

Ցանկանում ենք ի սրտէ աջողութիւն։

Յ. Գաս-եան

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Справочная книжка винодѣль. станціи рус. виноградарей и винодѣловъ. Одесса, 1909 г, цѣна 20 к. ռուս խաղողագործների և գինեգործների կայարանի տեղեկատու գրքոյկը։

Օդեսսայում վաղուցվանից վերաբնակված մեր հայրենակից Վաս. Թայիրեանը, «Вѣст. Винодѣлія» գեղեցիկ ամսագրի հիմնադրողը և բազմամեայ խմբագիրը,—այն անձն, որին այնքան շատ պարտական է ռուս գինեգործութիւնը և խաղողաբուծութիւնը Թէ տեսականապէս, Թէ գործնականապէս, և որ քանի ժամանակից ի վեր ձեռնարկել է մի օգտակար և կարևոր հիմնարկութեան, շնորհիւ իր և իր հանգուցեալ ամուսնու ջանքերի,—Օդեսսայում հիմնել է «գինեգործական կայարան», առաջինը իր տեսակի մէջ ամբողջ պետութեան մէջ, որի նպատակն է՝ օգնութեան գալ գինեգործական շրջաններին, մշակելով ու լուծելով մասնագիտութեան վերաբերեալ էական հարցերը, պատասխանել խաղողաբոյծների և գինեգործների դրած հարցերին։ Կայարանը հիմնադրի մտքով պէտք է պահպանվէր հասարակական միջոցներով՝ ինքնօգնութեան սկզբունքով, շահագրգռված զեմստվօների, քաղաքների, այգետէրերի և գինեգործների մասնակցութեամբ։ Բայց հասարակական ինքնօգնութիւնը մեր մէջ դեռ խոր արմատներ չէ ձգել և լաւ, որ կառավարութիւնը օգնութեան հասաւ, միջոց տալով կայարանի կանոնաւոր գործելուն։ Սակայն կայարանը պետական հաստատութիւն չէ, այլ հասարակական, իր հաստատված կանոնադրութեամբ։

Եւ կայարանը հենց առաջին քայլերից այնքան կենսունակութիւն ցոյց տուեց, որ օտարազգի հիմնարկութեան կողմից արժանացաւ ոսկէ մեդալի։

Ինչ խօսք, որ նման կայարաններ գոյութիւն պիտի ունենային ամեն մի խաղողաբուծական - գինեգործական շրջաններում՝ Բեսսարաբիայում, Ղրիմում, Դոնի շրջանում, Հիւսիսային Կովկասում և Անդրկովկասում, Թուրքեստանում։ Բայց քանի որ դա չը կայ, այդ ճիւղում աշխատող մարդկանց պարտքն է պահպանել այս միակ կայարանը և, որ գլխաւորն է, ծանօթ լինել նրա գործունէութեան հետ։

Ընդհանուր լրագրական էջերում տեղը չէ մանրամասնօրէն կանգ առնել այս բրօշիւրի վրա, որ ծանօթացնում է կայարանի դրած ծրագրի հետ. հետաքրքրվողները կարող են նրան ստանալ «Вѣст. Винодѣлія»-ի խմբագրութիւնից՝ Օդեսսա, Канатная 19.

Պետրոս Զաքարեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Արմաւիր, 30 հոկտեմբերի

Ի լրումն իմ նամակի, որ բարեհաճել էիք զետեղել «Մշակի» № 193-ում (այս տարվայ սեպտեմբերի 3-ին), ուղարկում եմ դարձեալ խմբագրութեանդ յօգուտ արկածեալ Թիւրքահայաստանցիների 119 ռ. 17 կ., որ առաջվան ուղարկածիս հետ (100 ռ.) կազմում է ընդամենը՝ 219 ռ. 17 կ. գումարը։

Ուղարկում եմ, իբրև վաւերաթղթեր յիշեալ գումարի հաշւետւութեան համար, և հինգ հատ ստորագրութեան Թերթեր ու խնդրում եմ Թերթերը փողերի հետ միասին յանձնել պատշաճաւոր յանձնաժողովին։ Իսկ ինչ վերաբերում է միւս Թերթերին, որ ցրել եմ նոյն նպատակով Արմաւիրի մէջ ու շրջակայքում և որոնք դեռ ինձ չեն վերադարձրած զանազան անձինք ու հիմնարկութիւններ, Թող վերջինները ժողոված գումարն ու Թերթերը բարեհաճեն ուղղել անմիջապէս «Մշակի» խմբագրութեան։

Սրանով փակում եմ իմ մօտ հաւաքված գումարի հաշւետւութեան հարցը։

Երդւեալ-հաւատարմատար՝
Զաւադ-բէկ Բալուղեան

—

Թիֆլիս, 20 հոկտ.

Սրանից մի քանի ժամանակ առաջ բաղդ ունեցայ Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին ուղարկել իմ աշխատասիրած «Ոգի Հայաստանի» պատկերի տպած մի օրինակը և ստացայ Բարգէն վարդապետից հետեւեալ նամակը.

«Նորին Սրբութիւն Վեհափառ Կաթողիկոսը ստանալով ձեր աշխատասիրութեամբ հրատարակված «Ոգի Հայաստանի» շքեղ պատկերի մի օրինակը՝ պատուերից ինձ հաղորդել իր շնորհակալութիւնն ու օրհնութիւնը ձերդ յարգութեան, ցանկանալով հանդերձ որ իւրաքանչիւր հայ ընտանիքում և մեր դպրոցական հաստատութեանց մէջ գտնվի հայ ժողովրդի հինաւուրց փառքը յիշեցնող այդ աջող պատկերը։

«Աղօթարար՝ Բարգէն վարդապետ»

Արդ՝ պարտականութիւն զգալով կատարել սրբազնագոյն Հայրապետի բարեհաճ կամքի այն մասը, որ դպրոցական հաստատութիւններին է վերաբերում, յայտարարում եմ ի գիտութիւն արտասահմանի և Ռուսաստանի հայ դպրոցների, որ իմ այդ նկարից մի մի օրինակ նուիրաբերում եմ իւրաքանչիւր դպրոցի։ Ճանապարհի և այլ ծախսերի համար հարկաւոր է ուղարկել 45 կ. ռուսական մարկաներ։ Դիմել՝ Тифлисъ, Вельяминовская 24, В. Варданяну, Tiflis, Veliaminovskaja 24, V. Vardanian.

Խնդրում եմ Ռուսաստանի և արտասահմանի բոլոր հայ Թերթերին արտատպել իմ այս նամակը։ Վ. Վարդանեան

—

Թիֆլիս, 4 նոյեմբերի

Յօգուտ Ադանայի որբերի արհեստաւոր Սմբատ Շահումեանի հարսանիքում հաւաքելով հետեւեալ անձերից 6 ռ. ուղարկում եմ յարգելի խմբագրութեանդ յանձնելու ըստ պատկանելոյն։ Ց. Շէկոյեան 1 ռ., Արտ., Շաքարեան, Տէր-Մովսիսեան, Ս. Շահումեան և Ղարամեան 50-ական կ., Մարտիրոսեան 40 կ., Ն. Խանումեան, Ա. Տէր-Աստուրեան, Գ. Շահումեան 30-ական կ., Տէր-Մարտիրոսեան, Յ. Շահումեան 25-ական կ., Ի. Շահումեան, Յարութիւնեան, Թ. Թամիրեան 20-ական կ., Հայկ 10 կ.։

Յովհ. Շէկոյեան

ԿՈՉ

Երբ ներկայ 1909 Թ. յունիս ամսին Տարօնի գաւառի առաջնորդական պաշտօնը վերստին ստանձնած՝ Կ. Պօլսէն Մուշ կը դառնայի, աչքիս առջև պարզուած աւերի և Թշուառութեան անհելի տեսարանները հանդէպ՝ սիրտս դառնութեամբ կը լեցուէր և աչքերս արտասուօք։

Բռնաւորական վայրագութիւնները հայրենիքը քար ու քանդ ըրած էին։ Հունձքերը Թէև բաւական յաջող կերեւէին, բայց սովի արհաւիրքը անցած չէր. կմախք դարձած կիսամերկ բազմութենէ մը կը շրջապատուէի, որոնք հացի կարօտ, հագուստի կարօտ, շատերն ալ հողազուրկ անհանդուրժելի վիճակ մը ունէին։ Բայց մի զարմանք, եթէ ըսեմ ձեզ, որ այդ քաղցած, հիւծուած, մաշուած բազմութիւնը հացի փոխարէն դպրոց կը խնդրէր ինձմէ։

Քանի մը շաբաթէ վերջ Մուշի դաշտի գիւղերը այցելեցի, սասունցիները տեսայ. ա՜հ, ո՜րչափ տառապած, չարչարուած էին, ո՜րքան Թանկագին կեանքեր կորսուած էին. բայց անոնք այդ ամենը մոռնալ կուզէին և միակ բաղձանք մը կը յայտնէին, գիտութեան հացը ունենալ, կրԹուիլ և շուտով կրԹուիլ։ Այդ էր և է Տարօնի և Սասունի գիւղացիներու երազն։ Անոնք ամենայն սիրով զոհաբերութիւններ ալ յանձն առին, տուին ինչ որ կրնային, ինչ որ հնարաւոր էր դպրոց ունենալու համար։ Բայց իրենց միջոցները չէին բաւեր. անոնց քայլերը տակաւին նոր ոտք ելած մանկան քայլեր էին. անոնց ձեռքէն բռնել պէտք էր։ Անոնց կողմէն է որ ես՝ ձեր մէջ եկած՝ ձեր գԹութեան դուռը կը բաղխեմ և ձեր օգնութիւնը կը խնդրեմ։ Անոնք վստահ են, Թէ դուք կը սիրէք անսահման սիրով զիրենք որպէս ձեր եղբայրները և օգնութեան կը փութաք։

Ո՜վ ազնիւ հոգիներ, ահա ձեր առջև բացուած է բարեգործութեան ասպարէզ, ձեզմէ իւրաքանչիւր ոք կարող է իր հովանաւորութեան տակ առնել Տարօնի և Սասունի ոևէ մէկ գիւղի վարժարանը, իր անունը դնել անոր վրայ և երախտապարտ Թողուլ նոյն գիւղի ժողովուրդը։

Կոչս կուղղեմ նաև այն մեծահոգի, մեծանուն բարերարներուն, որոնք կը ցանկան կարևոր կտակներով յաւերժացնել իրենց յիշատակը. Թող անոնք իրենց ուշադրութիւնը դարձնեն դէպի Տուրուբերան, դէպի Տարօն և Սասուն, ուր մենք նպատակ ունինք կանգնել երկրագործական և արհեստագիտական միջնակարգ վարժարաններ, որոնք միջոց պիտի ըլլան կազդուրելու և փրկելու կմախքացած ժողովուրդը աղքատութեան ճիրաններէն։

Ազգիս նորընտիր Վեհափառ Հայրապետն ամենավստահելին է բարեգործներու կտակները իրենց նպատակին ծառայեցնելու. Թող ամեն ոք առանց կասկածի և տարակոյսի փութայ Նորին Վեհափառութեան միջոցաւ Աստուծոյ իրեն տուած բարիքները մատակարարել իր ազգի կրԹութեան պէտքին և Թողնել յաւիտենական բարի անուն ազգաց յազգս։

Ընդհ. վանահայր առաջնորդ Տարօնի՝
Ներսէս եպ. Խարախանեան

Թիֆլիս, 6 նոյեմբեր

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

7 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Փօստ-հեռագրական գլխաւոր վարչութիւնը տեղեկացնում է, որ Ռուսաստանի կենտրոնի ձիւնախառն փոԹորիկների պատճառով հեռագրական հաղորդակցութիւնը շատ քաղաքների հետ ընդհատվել է։ Միջոցներ են ձեռք առնված հեռագրական հաղորդակցութիւն շուտով վերականգնելու։

Առաւօտեան վերադարձաւ ֆինանսների մինիստրը։

Խոլերայով հիւանդացան 3, մեռնողներ չեղան։

Բարձրագոյն հաստատութիւն գտան մինիստրների խորհրդի հետեւեալ որոշումները. 1) ֆինլանդական գեներալ-նահանգապետին Թոյլ է տրված մշակել և շուտով մինիստրների խորհրդի քննութեանը ենթարկել առաջադրութիւններ կառավարական հաստատութիւնների և Ֆինլանդիայի կառավարիչ պաշտօնեաների և պետութեան միւս մասերի միջև ամեն դէպքերում, երբ այդ հարկաւոր կը լինի, պետական լեզուով յարաբերութիւն պահպանելու մասին և 2) ֆինլանդական մեծ իշխանութեան մէջ գտնվող կառավարական հաստատութիւնները և պաշտօնական անձինք պարտաւորապէս գործածելու են գերբային գրոշներ, ուր օրէնքով այդ պահանջվում է։

Պետութեան 134 քաղաքներում հրդեհաշէջների ոստիկանական խմբերը վերածվել են հասարակականի, բացի Լեհական Թագաւորութեան և Կովկասի նահանգներում։

ԿԻՐՉ։ Քաղաքային դուման որոշեց արական գիմնազիայում հաստատել Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Տրուբեցկոյի անունով մի Թոշակաւորի տեղ։

ՏԱԳԱՆՐՈԳ։ Իւսիւպովայի հանքերի մէջ 6 զինված մարդիկ յարձակվեցին և սպառողական ընկերութեան գանձարկղից յափշտակեցին 6 հազար ռուբլի։

ՕԴԵՍՍԱ։ Քաղաքային դուման որոշեց քաղաքային տարրական դպրոցներում մտցնել զինավարժութեան և մարմնամարզութեան պարապմունքներ։

ՀԱԱԳԱ։ Արտաքին գործերի մինիստր Տիտտոնին և Նիդէրլանդի դեսպանը ստորագրեցին պայմանագիր միջնորդ դատարանի մասին։

8 նոյեմբերի

ՌԻԲԻՆՍԿ։ Առաջին Դումայի անդամ Սուբբոտինը 129-րդ յօդուածի երկրորդ մասով ենԹարկվեց մի ամեայ բանտարկութեան։

ՕԴԵՍՍԱ։ Պահեստի պրապորշչիկ Իվանովի գրպանում պայթեց մի ռումբ։ Քննութիւն է կատարվում։

ՎԱՐՇԱՎԱ։ Հոգեհանգիստ կատարվեց Կոլցովի և Ակսակովի յիշատակին։ Ապա կայացաւ գրական-երաժշտական ժողով։

ՊՕԼՏԱՎԱ։ Օրժէն գիւղում, Մեշչերսկայայի կալուածքում, հրդեհից այրվեցին 27 ձի և 2000 պուդից աւելի ծխախոտ։

ԿԱՏՕՎԻՑ։ Դատախազը գրաւեց 1910 Թ-ի բանուորական օրացոյցից 17,000 օրինակ իր բովանդակութեան պատճառով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Այսօր մի քանի զօրամասեր տօնեցին իրանց գոյութեան 100-ամեակը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

Նոր-Նախիջեւան, Մուշէ վարդապետին.—Դուք գանգատվում էք, թէ «Մշակը» ոչինչ չը հաղորդեց այն մասին, որ Դուրեան պատրիարքը հրաժարականը յետ է առել, մինչ «Հովիւը» յայտնել է այդ մասին իր № 41-ում։ Մենք մեղաւոր չենք, որ «Հովիւը» սխալ լուրեր է տպում և այն, ինչ ինքն է ցանկանում, տալիս է իբրև փաստ։ Դուրեան պատրիարքը դեռ մինչև այժմ էլ հրաժարականը յետ չէ առել։

Երեւան, Մուշեղ Բագրատունուն.—Լ. Մ.-Աղամեանի գրքի մասին աւելի լաւ է ոչինչ չը գրել։ Պատճառը միթէ հասկանալի չէ։ Ձեր քննադատութիւնը առաջ կը բերի մի երրորդ գիրք։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 Թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Յ. Մ. ԿԵՕՆՋԵԱՆ—ատամնաբոյժ—8½—11½ ժ., պլոմբներ և արհեստական ատամներ։
Կ. Մ. ՁԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու. վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ,
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԷԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԷԼ—6—6½ ժ մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ց. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Ջրաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Հիւանդանոց
Մետակաճ մահճակալներով
Թիֆլիս, Միխայլօվսկի պր., Միքայէլեան հիւ. դիմաց, 59, տէլ. 1026
Հիւանդների ընդունելութիւն.

ՄԻՔ. ԱՂԱՋԱՆԵԱՆ—առ. ժ. 11—12-ը, միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւ.։
Ն. Ա. ԱԹԵՆԵԱՆՑ—ցեր. ժ. 1—2-ը, ականջի, քթի և կոկորդի հիւանդութիւններ։
Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ—ցեր. ժ. 1—2-ը, վիրաբուժական հիւանդութիւններ։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ—առ. ժ. 11—12-ը, ջղային և ներքին հիւանդութիւններ։
Մ. Պ. ԿԻՄՕՆՏ—առ. ժ. 11—12-ը վիրաբուժական հիւանդութիւններ։
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ—առ. ժամը 10—11-ը ներքին և երեխաների հիւանդութիւններ։
Լ. Մ. ՄՕՆԻՆ—ցեր. ժ. 1—2-ը, կանանց հիւանդ. և մանկաբարձ.։
Ա. Դ. ԿԱԼՄԸԿՕՎԱ-ՎՆՈՒԿՕՎԱ—ցերեկ. 2—3 ժամը, կանանց հիւանդութիւններ։

Բժշկութիւն էլեկտրականութեամբ, մասսաժով և հիպնօզով։ Միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ։ Ծաղկի պատուաստում։ Ծծմայրերի քննութիւն։ Վճարը խորհրդի համար 50 կ.։ Օպերացիաները և համախորհուրդները ըստ համաձայնութեան։ Հիւանդների բաժանմունքը բաղկացած է թէ ընդհանուր և թէ առանձին սենեակներից

(Կ. Ե. ու.) 236. 100—60

Բ Ժ Ի Շ Կ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր { 12—1 ժ. առաւ. / 5—6 ժ. երեկ.
Միքայէլեան փող., № 36, տ. Ճաւճանիձէի
(օ. մ.) 100—33

ՄԵԴԻՑԻՆԱՅԻ
ՖԷԼԴՇԷՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Յ. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Բժիշկների որոշմամբ կատարում է կաշուի տակ սրսկումներ, լուացումներ (спринцов.), վէրքի փաթաթումն, դեղերի քսումն (втиранiе) եայլն։ Էլեկտրականութիւն ռէվմատիզմի, պարալիչի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ։ Մասսաժ էլեկտրական գործիքով և ձեռքով. մասնաւոր և ընդհանուր մասսաժ։ Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մասնագէտ հմուտ բժիշկների։ Տալիս է այլ և այլ բժշկական-առողջապահական խորհուրդներ։ Կարելի է և գրաւոր, ներփակելով վարձատրութիւն ըստ կարողութեան։ Ընդունելութիւնը 3—4 ժամը։ Семеновская ул., № 9, Վօրօնցօվի կամուրջին մօտ։

(օ. մ.) 857. 0—26

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինօվսկայա փող № 8
(օ. մ.) 783. 100—44

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։
Ընդունում է հիւանդներին՝
Առաւ. ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը։
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։
Կուկիա, Սեմեօնօվսկայա փ. № 16.
Տէլէֆօն № 40.
(Ե. ու. կ.) 984. 100—20

Բ Ժ Ի Շ Կ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր (առաւօտեան ժ. 12½—2. / երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 11—12½։
Հասցէն՝ Սօլօլակ, Բէհբութեան փ., № 33.
(ա. օ.) 1044. 100—29

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Ներքին և ջղային հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր | առաւօտեան 9—12 ժ. / երեկոյեան 5—7 ժ.
Միքայէլեան փողոց, № 27.
(ա. օ.) 1087. 100—20

Բ Ժ Ի Շ Կ
Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների։ Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։
Կոջէնիեվսկայա փ., № 6, «Վէտցել» հիւրանոցի մօտ։ (Ե. հ. շ.) 955. 100—22

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ

որ աւարտել է գիմնազիայի VIII դաս., գիտէ հայերէն, փնտռում է դասեր կամ ընտանեկան վարժուհու պաշտօն՝ Թիֆլիսում կամ դուրսը։ Հասցէն՝ Вознесенская, 22, кв. студента. Տեսնել երեկ. 5—6 ժամը։

1215. 1—1

Չեղած էժանութեան

7 ր. 25 կ. ձմեռային կամ աշնանային զգեստի երկու կտոր, տղամարդկանց և կանանց համար, ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՔԸ ՊՕՍՏՈՎ՝ ՁՐԻ։ Սիբիրի համար ճանապարհածախքը 85 կոպ.)։ Չը հաւանած դէպքում՝ ֆաբրիկան փողը վերադարձնում է։ Տղամարդկանց կտորը 4¼ արշ.՝ «ԱՆԳԼԻԱԿԱՆ տրիկօ», ամուր, բրդից, 2 արշին լայնութեան, նորագոյն նկարներով, և 8 արշ. տրիկօ՝ «ՄԱՐԻԱՆԱ», բրդից, մօդային նկար, կանանց էլեգանտ զգեստի համար։ Երկու կտորներն էլ ամեն տեսակ մութ գոյներով։ Վերադիր վճարով ուղարկվելուց՝ հաշւվում է 16 կոպ. պօստային ծախք։ Հասցէագրել՝ ФАБРИКА М. А. БАБУШКИНА, ЛОДЗЬ. М.

(Ե.) (В. 67867.) 1144. 3—3

Չորս տարվայ փորձառութիւն ունեցող
ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ

Ձեռնտու պայմաններով տեղ է փնտռում հայոց դպրոցներում։ Աւանդում է հայերէն, թւաբանութիւն, ռուսերէն, ձեռագործ, նաև կար ու ձև։ Դիմել՝ Тифлисъ. кiоскъ «Паросъ» (Эриванская пл.) Ն. Մատինեանին։

(Շ. Ե.) 1205. 2—2

1910 ԹՒԻ ՀԱՄԱՐ
ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԳԻՒՂԱՏՆՏԵՍ"

պատկերազարդ շաբաթաթերթի (Բ տարի)

«ԳԻՒՂԱՏՆՏԵՍԻ» բովանդակութիւնը. Երկրագործութիւն։ Անասնաբուծութիւն և կաթնատնտեսութիւն։ Պարտիզպանութիւն և պտղաբուծութիւն։ Այգեգործութիւն և գինեգործութիւն։ Յատուկ բոյսերի մշակութիւն։ Մեղուաբուծութիւն և շերամապահութիւն։ Բանջարաբուծութիւն։ Թռչնապահութիւն։ Կօօպերացիա և սպառողական ընկերութիւններ։ Գիւղատնտեսական նորութիւններ։ Գիւղատնտեսական կեանք։ Գրախօսութիւն։ Թղթակցութիւններ։ Տնայնագործութիւն և տնարարութիւն։ Հարց և պատասխաններ։ Պօստ-արկղ և յայտարարութիւններ։

Առաջիկայ 1910 թւին «Գիւղատնտեսին» աշխատակցելու են նաև Թիւրքահայ գիւղատնտեսներ։

«Գիւղատնտեսը» 1910 թւի իր տարեկան բաժանորդներին թերթի համարներից դուրս տալու է որպէս նուէր՝

ՀԱՑԱՌՈՅՍԵՐԻ ԵՒ ԽՈՏԱՌՈՅՍԵՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԼԱՒԱԳՈՅՆ ՍԵՐՄԵՐ

Բաժնեգինը՝

Ռուսաստանում		Արտասահմանում	
Տարին	3 ռուբլի	Տարին	4 ռուբլի (12 ֆրանկ)
Կէս տարին	2 ռուբլի	Կէս տարին	2 ր. 50 կ. (7 ֆրանկ)

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Гюхатнтесъ". Արտասահմանից՝ Tiflis (Russie) Rédaction «Guchatntess».

(Կ. հ.) 1179. 24—3

Լոյս տեսաւ և վաճառվում է

ՓԱՐՈՍ

ՏՈՑԻ ՕՐԱՑՈՅՑ 1910 ԹՒԱԿԱՆԻ

Հարուստ ու ճոխ բովանդակութեամբ։ Պարունակում է իր մէջ մի շարք յայտնի գրական գործիչների յօդուածները, գրած յատկապէս օրացոյցի համար։ Ունի հայերիս մէջ դեռ լոյս չը տեսած արժէքաւոր յաւելուած «ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ» վերնագրով, որի մէջ զետեղված են քսանեհինգ հայ գրագէտների պատկերները իրանց համառօտ կենսագրական և գրական գոյնը որոշող յօդուածներով։ Վեհ. Կաթողիկոսի և Մինաս Չերազի պատկերներով։

ՕՐԱՑՈՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ.

Մասն I. 1) Շարժական և անշարժ տօներ, 2) Կայսերական տօներ, 3) Պահքի արարողութեան թոյլատրելի օրեր, 4) Օրացոյց 1910 թւականի, 5) Ժամերի համեմատական ցանկը, 6) Որ օրը խանութները պիտի փակել։

Մասն II. 7) Զեմստվօ, 8) Օրէնսգրքեր, 9) ա) Զինուորագրական կանոններ, բ) Ինչ արժէ զինուորական ծառայութիւնը, 10) Մեծ պետութիւնների զինուորական բիւջէները, 11) Քաղաքական. Մերձ. Արև. վերածնութիւնը, Վօրքման, 12) Երկրաբանական. Երկիրը կը մեռնի ծարաւից, 13) Հիւսիսային բեւեռի բացումը, 14) Աստղագիտութիւն. ա) Տարվայ յարատեւութիւնը, բ) Տիեզերք. Տարրական հասկացողութիւններ աստղագիտութիւնից, գ) Մոլորակների համեմատական աղիւսակ, 15) Գիտական երազահան. ա) Երազների վաղեմի բացատրութիւնը; բ) Երազները կեանքի արտացոլումներ են, գ) Երազի հոգեբանութիւնը, դ) Երազները և մեր հիւանդութիւնները, ե) Երազները և նրանց նշանակութիւնը, 16) Առողջապահական. ա) Մենք շատ ենք ուտում, բ) Սննդի նորմալ բաժինը 24 ժամվայ համար, գ) Մարսողութեան ցանկը, դ) Մածուն և կէֆիր, ե) Առողջ մարդու ննջարանը, զ) Հագուստը, 17) Գիւղատնտեսական. Երկրագործական գործիքների և մեքենաների մասին. Ա. Աթանասեան, 18) Գիտական. Ջուրը. Յ. Ակունեան։ 19) Լեզուագիտական. ա) Էսպերանտօ կամ միջազգային լեզու, բ) Գլխաւոր լեզուների տիրապետութիւնը, գ) Բարքեր. մեռելների այրումը, 20) Ֆելիէտօն. Կապը կտրած կինը. Նար-Դոսի, 21) Դպրոցական. ա) Ուսումը ապագայում. Ղ. Աղայեան, բ) Ազատ մանկան տունը. Կ. Վէնցելի, 22) Կենսագրական. ա) Մատթէոս II, Կաթողիկոս Ամենայն Հայոց, բ) Մինաս Չերազ, 23) Առևտրա-Արդիւնաբերական. ա) Ընդհանուր ակնարկ, բ) Առևտրական և ֆինանսական հաստատութիւններ, գ) Գիւղական բանկեր. Ս. Ղալաչեան, դ) Հարկեր և տուրքեր, ե) Պարապմունքի հարկեր, զ) Նօտարական ծախսեր, է) Մուրհակի մասին, ը) Պարտաթուղթ, թ) Պահպանութեան թուղթ, ժ) Յուզանքի թուղթ, ժա) Կանխավճարի մասին, ժբ) Նաւթ, 24) Պօստ. (Կանօնագր. նորագոյն հրատարակ.։ Այս մասի վերցված է միայն ներքին յարաբերութիւնը լիակատար (45 երես) մանրամասն սակագներով և ցուցակներով)։ 25) Անեկդօտ, 26) Զուարճալիք. ա) Զուարճալի խնդիրներ, բ) Ինչպէս գտնել մէկի տարիքը, գ) Տասներկու անաջող փորձ (սալօնի խաղեր), 27) Ծովը. Վ. Փափազեանի, 28) Ստատիստիկա, 29) Արհեստակցական։

Յաւելուած։ ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ։ Գեղեցիկ թղթի վրա, 64 երես, համառօտ կենսագրական բնորոշ յօդուածներով։

Օրաց. մէջ զետեղված է մի հետաքրքրաշարժ խնդիր, որին լուծողը ստանում է պրեմիա։

ԳԻՆՆ Է 20 ԿՕՊ.

Օտար քաղաքացիներին 100 օրինակ պահանջելու դէպքում 20% զեղչ և պօստի ծախսը մեզ վրա։ Դիմել՝ Типографія «Эпоха» В. Вартанянцу.

(Ե. հ. կ.) 1137. 8—6


ЕДИНСТВ. ПРЕДСТАВ. „БАЗАРЪ НОВОСТЕЙ" ВАРШАВА

ԸՆԾԱՅԵՑԷՔ ՁԵԶ ԵՒ ՁԵՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Պատի ժամացոյց զանգակով եւ հօպօպով

12 ր. փոխարէն՝—ՄԻԱՅՆ 5 Ր. 50 ԿՈՊ.

Բազմաթիւ պատուիրողներ քանիցս խնդրել են մեզ ուղարկել իրանց պատի ժամացոյց հօպօպով. կամենալով կատարել այդ խնդիրները՝ մենք վերցրել ենք աշխարհահռչակ Շվարցվալդեան ֆաբրիկայից այդ ժամացոյցները. Ֆաբրիկան թոյլատրել է մեզ փորձի համար վաճառել 10,000 հատ՝ Ռուսաստանում մինչև օրս չեղած էժան գնով—միայն 5 ր. 50 կօպէկով։ Այդ ժամաց. (տես նկարը) պատի համար են, շքեղ և ամուր շինուածք, գեղեցիկ ճօճանակով և 2 գիրաներով, կօրպուսը կաղնէ փայտից, 40×20 սանտ. մեծ., գեղեցիկ քանդակներով ներքևի մասում։ Մեխանիզմը ամուր շինուածք և լաւ տեսակի, ամենաճիշդ ընթացքով։ Հօպօպը տեղաւորված է ժամաց. վերևի մասում, էլեգանտ վանդակի մէջ։ Ժամաց. թէ իւրաքանչիւր ժամերը և թէ կէս-ժամերը զարնում է, իսկ հօպօպը միաժամանակ երգում է այնպէս բնական և գեղեցիկ, որ իւրաքանչիւր լսող հիանում է։ Խորհուրդ ենք տալիս շուտով ձեռք բերել այդ ժամացոյցը, որովհետև արագ կարող է սպառվել։ Ժամաց. կցվում են երաշխաւորութիւն 6 տարով և գործադրելու ձեռնարկ։ Ուղարկում ենք վերադիր վճարով և առանց կանխավճարի. Սիբիրից պահանջողը պիտի ուղարկէ 2 ր. կանխավճար (կարելի է նամականիշներով)։ Ճանապարհածախքը 95 կօպ., Արևմտեան Սիբիր՝ 1 ր. 60 կ., Արևելեան Սիբիր՝ 2 ռուբլի։ Պատուէրները հասցէագրել՝ „БАЗАРЪ НОВОСТЕЙ" Варшава, Грибная площ. № 6—85.

Թղթակցութիւնները ռուսերէն կամ գերմաներէն լեզուներով։

(В. 68840) 1166. 1—1

◆ Օրացուցային գրականութեան մէջ աչքի ընկնող նորութիւն ◆
◆ Ամեն մի հայի սեղանի զարդ ◆
◆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ 132 ԳԵՂԵՑԻԿ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ◆

Լոյս տեսաւ և վաճառվում են Ս. Մ. և Խ.-ի հրատարակութեամբ և Յ. Ք. Խաչվանքեանի խմբագրած

„ԼՈՅՍ-ԱՐԱՔՍ"

Պատի 132 և գրպանի 16 գեղեցիկ պատկերներով

1910 Թ.

Ընդարձակ յաւելուածներով օրացոյցները
III ՏԱՐԻ

Նոր յաւելուածներով ճոխացրած և գրականական ու հասարակական (եւրոպական և հայկական) գործիչների պատկերներով զարդարած օրացոյցները իրանց բովանդակութեամբ ու արտաքին շքեղութեամբ կարող են մրցել եւրոպական նոյնպիսի հրատարակութիւնների հետ։

Պատի օրացոյցի դիրքը, արտաքին շքեղութիւնն ու ներքին բովանդակութիւնը կարող են բաւարարութիւն տալ ճաշակաւոր մարդկանց պահանջներին։ Պատինի գունաւոր պատկերը՝ գերմանական վրձինի արդիւնք է և յիշեցնում է հայ ժողովրդի հերոսական տոկունութեամբ խաւարի դէմ մաքառելու դարաւոր ջանքերը և յաղթանակը։

«Զար Արտաւազդը Մասեաց սարերի անդնդում»։ Առաջին երեսի վրա փայլում է խիստ աջողված երկաթէ պատրիարքի, այժմեան Կաթողիկոս Տ. Տ. Մատթէոս Բ.-ի պատկերը։

Օրացոյցի առաջին երեսների վրա կը գտնէք ընտիր մտքեր, ժամանակագրութիւն, բանաստեղծական հատընտիր կտորներ, աֆօրիզմներ և ազգային ու եւրոպական գործիչների ու փայլուն անձնաւորութիւնների պատկերներ՝ Ստեֆենսօն, Լիւտեր, Միլտօն, Շէքսպիր, Գէօթէ, Շիլլեր, Նապոլէօն, Դարվին, Րընան, Էդիսօն, Գալիլէյ, Լինկօլն, Գուտենբերգ, Գարիբալդի, Բայրօն, Գլադստօն, Լերմօնտօվ, Տուրգենեվ, Գարշին, Դօստօեվսկիյ, Նեկրասօվ, Կրիլօվ, Նադսօն, Պուշկին և այլք. Տ. Տ. Մատթէոս II, Խրիմեան, Խ. Աբովեան, Դուրեան, Նազարեան Ս., Գ. Արծրունի, Նալբանդեան, Ն. Վարժապետեան, Պէշիկթաշլեան, Սրուանձտեան, Ալիշան, Գարագաշեան, Չիլինգարեան, Օտեան, Այվազօվսկի եղբայրներ, Ծերենց, Պռօշեան, Աղայեան, Ջանշեան, Սանասարեան, Էմին, Յովսէփ կաթ., Լէօ, Պատկանեան, Գամառ-Քաթիպա, Ահարոնեան, Քրիստափոր, Շիրվանզադէ, Մուրացան, Փափազեան, Ա. Յովհաննիսեան, Յովհ. Յովհաննիսեան, Թումանեան Յով., Աւ. Իսահակեան, Ադամեան, Սիրանոյշ, Աբէլեան, Պետրոսեան, Թուրեան, Խաժակ, Սահակ և Մեսրոպ, Աւարայրի դիւցազները, Ոգի Հայաստանի, Մայր Հայաստանի, Անիի պատկերներից, Յիսուս խաչի տակ, կեանքից պատկերներ և նշանաւոր ճարտարապետութիւններ։ Պարսից նոր շահը, Սաթթար խան, Միդհատ փաշա, Նիազի և Էնվէր բէյեր և ուրիշները։

Յաւելուածի նիւթերն են—1) Ժողովրդական առողջապահութիւն և նրա պարտադիր կանոնները. 2) Մահացութեան և նրա պատճառների վերաբերեալ վիճակագրական տեղեկութիւններ. 3) Դպրոցական. 4) Ընտիր բանաստեղծութիւններ, առակներ, անեկդօտներ և ծիծաղաշարժ պատմուածքներ. 5) Գիւղատնտեսական—հողը պարարտացնելու միջոցներ, թռչնաբուծութիւն. 6) Կօօպերացիա և նրա տուած օգուտները. 7) Օգտակար գիտելիքներ և կարևոր տեղեկութիւններ առօրեայ տնտեսութեան վերաբերեալ. 8) Նոր գիւտեր. 9) Զեմստվօ և քաղաքային ինքնավարութիւններ. 10) Պետութեան տեսակները և նրանց եկամտի աղբիւրները. 11) Բժշկականութեան կատարած հրաշքները. 12) Կենդանիների կեանքից հետաքրքիր նոր երևոյթներ. 13) Կենսագրականներ. 14) Վիճակագրական տեղեկութիւններ եայլն։

ԳՐՊԱՆԻ ՕՐԱՑՈՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

1) Օրացոյց. 2) Ժամերի և չափերի համեմատական աղիւսակը. 3) Պօստ. 4) Ռուսաստանի ստատիստիկան. 5) Ազգաբնակութեան բաշխումը ըստ տնտեսութեան և նրա պարապմունքը զանազան երկրներում. 6) Ազգաբնակութեան բաշխումը ըստ մարմնական պակասութեան. 7) Ռուսաստանի օրէնքները. 8) Հպատակութիւն. 9) Անցագիր. 10) Զինուորագրական կանոններ. 11) Եւրոպայի զօրքը և պատերազմական նաւատորմը. 12) Ի՞նչ արժէ զինուորական ծառայութիւնը. 13) Պետական ել և մուտքը Ռուսաստանում. 14) Զանազան երկրների ժողովրդական հարստութիւնը. 15) Մթերքների գործածութիւնը Ռուսաստանում և արտասահմանում. 16) Ի՞նչ հիւանդութիւններ են տանջում ժողովրդին. 17) Բժշկական և առողջապահական. 18) Բնակարանների հարցը. 19) Հարբեցողութիւն և նրա դէմ մաքառելու միջոցներ—Գետեբորգեան սիստեմը. 20) Տեղական ինքնավարութիւններ—զեմստվօ. 21) Ժողովրդական կրթութիւնը. 22) Արտաքոյ դպրոցի կրթութիւն. 23) Գիւղատնտեսական—հողի պարարտացնելը. 24) Բեղուն և ոչ բեղուն տնտեսութիւն. 25) Տաճկ. սուլթան Համիդի գահընկեցութիւնը. 26) Կենսագրական—նոր սուլթան Մահամմէդ Ե., Մինաս Չերազ. 27) Այլևայլք. Ինչպէս որոշել շաբաթվայ որևէ օրը. 28) Մատիի 250-ամեայ յօբելեանը. 29) Օդապարիկները որպէս նախազգուշական միջոց կարկտի դէմ։

Պատկերներ—Տ. Տ. Մատթէոս II, Մինաս Չերազ, Յիսուս խաչի տակ, Նոր շահը, Սաթթար խան, Նիազի և Էնվէր բէյեր, Դարվին, Նադսօն, Տուրգենեվ, Միլտօն, Ծատուրեան, Ահարոնեան եայլն։

Գները՝ պատինը 50 կօպ., գրպանինը՝ 20 կօպ., գումարով գնողներին զգալի զեղչ։

Դիմել՝ Александрополь, типографія Саноянца կամ типографія Малхасяна.

Արտասահմանից՝ Alexandropole (Caucase) Okanes Sanoianz.

(Ե.) 1156. 0—3



Մօդային, գործնական, սիրուն

Ստուգված են միայն պատենտ ունեցող մեր «ԴԷԿԱԴ ՆՍ» ժամացոյցները։ Ժամացոյցի կօրպուսը ամենատափակն է, մետալից, հին արծաթի նման, դրոշմված զանազան նկարներով (նայիր նկարը). ընթացքը քարերով, լարումը առանց բանալիի 40 ժամը մի անգամ։ Երբեք չեն կորցնում իրանց սկզբնական տեսքը։ 12 ր. փոխարէն միայն 3 ր. 5 կ., իսկ 2 հատը 6 ր. 50 կօպէկով։ Կանանց նոյնպիսի ժամացոյցներ 4 ր. 50 կօպէկով։ ՄԵՐ ԽՈՐՀՈՒՐԴՆ Է.—Բերել տուէք միայն «ԴԷԿԱԴԱՆՍ» ժամացոյցը և դուք միշտ շնորհակալ կը մնաք մեզանից։ Ուղարկում եմ մինչև բօլէնները սպառված՝ ժամացոյցները վերադիր վճարով և առանց կանխավճարի, երաշխաւորելով ժամացոյցի ընթացքի ճշգութիւնը 6 տարով, իսկ մետաղի ամրութիւնը 25 տարով։ Մինչև 4 հատի առաքումը 40 կ. (Սիբիր 75 կ.)։ Նոր ոսկէ շղթաներ բրլյօկով՝ 75 կ. և 1 ր. 50 կ. հատը, երկճիւղ շղթան 2 ր. 50 կ. և 3 ր. 50 կ.։ Հասցէն՝ И. ШТРУМФЕЛЬДЪ, Варшава. Св. Креста № 48.

Խնդրում ենք հասցէն կտրել և կպցնել ծրարի երեսին։

(В. 63336) 1022. 10—6

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն

«ՄԵՍՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ»—«MESSAGERIES MARITIMES»

17/30-ին նոյեմբերի մեկնելու է Բաթումից առաջնակարգ «Danube» շոգենաւը հանդիպելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պօլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէյլ, Հավր և Լօնդօն։

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչև Պարիզ, Նիւ-Եօրկ և Շանխայ (Չինաստան), Հեռաւոր Արևելք գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում, պակասեցրած գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, Նախկին Արծրունու գալերէյում թիւ 127 գրասենեակը, հեռախօս թիւ 608։ Գրասենեակը բաց է՝ 9—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, ամեն օր, բացի կիրակի օրերից։

1213. 1—1

Электропечатня Ав. Мугдусіакопова съ С-ми.
Большая Ванкская № 3.